

ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ և ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ(ՏՏԵԶ) ԾՐԱԳԻՐ

Գյումրի քաղաքի զբոսաշրջության ենթակառուցվածքների և ճանապարհների
վերակառուցում ենթաձրագրի հետևյալ բաղադրիչների.

- 1. Խանջյան և Չայկովսկու փողոցների վերականգնում (1) և և Հաղթանակի պողոտայի
վերականգնում (4);*
- 2. Մբ. Ամենափրկիչ եկեղեցու հարակից այգու և հարող Աբովյան փողոցի աջ և ձախ
հատվածների վերականգնում (3);*
- 3. Աճեմյան, Հանեսողյան և Զիվանի փողոցների վերականգնում (5) և Տերյան և
Նալբանդյան փողոցների վերականգնում (6)*

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

/ԼՐԱՄՇԱԿՎԱԾ/

Երևան, 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	6
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ	9
3.1. Աշխարհագրական դիրքը և ռելիեֆը	9
3.1.1 Երկրաբանություն	9
3.1.2 Սեյսմոլոգիա.....	9
3.2. Կլիմա, օդի որակ և աղմուկ	11
3.2.1 Կլիմա.....	12
3.2.2 Օդի որակ	15
3.2.3 Աղմուկ	20
3.3. Ջրային ռեսուրսներ.....	20
3.3.1 Ջրային ավազան.....	20
3.3.2 Լճեր, ջրամբարներ և ստորգետնյա ջրեր	20
3.3.3 Ջրերի ֆոնային աղտոտվածությունը	21
3.3.4 Հողեր, էրոզիա և հողի աղտոտում	23
3.4. Կենսաբազմազանություն	24
3.4.1 Բուսական աշխարհ	24
3.4.2 Կենդանական աշխարհը.....	25
3.4.3 Բնության հատուկ պահպանվող տարածքներ	25
3.5. Հնագիտական, պատմական, բնական և մշակութային հուշարձաններ	25
3.6. Սոցիալ տնտեսական պայմանները	27
3.6.1 ՀՀ Շիրակի մարզ	27
3.6.2 Ազդակիր համայնքներ	28
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	29
4.1. Խանջյան և Չայկովսկու փողոցների վերականգնում	29
4.2. Սբ. Ամենափրկիչ եկեղեցու հարակից այգու և հարող Աբովյան փողոցի աջ և ձախ հատվածների վերականգնում	30
4.3. Աճեմյան, Հանեսօղլյան, Ջիվանի փողոցների վերականգնում և բարեկարգում`	31
4.4. Տերյան և Նալբանդյան փողոցների վերականգնում և բարեկարգում	31
5. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ	32

5.1.	Առանց ծրագրի այլընտրանք.....	33
5.2.	Երթևեկության անվտանգության կազմակերպում	33
5.2.1	Շինարարական աշխատանքների ցուցանիշները.....	34
5.2.2	Շինարարությունում օգտագործվող հիմնական մեքենաներ և մեխանիզմների անվանացանկը	35
6.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆԱԴԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ	39
6.1.	Շրջակա միջավայրի վրա ակնկալվող ազդեցությունը	39
6.2.	Շինարարական աշխատանքների ազդեցությունը	39
6.2.1	Բուսականության հեռացում	39
6.2.2	Մշակութային ժառանգություն.....	40
6.2.3	Թոթոռումներ	40
6.2.4	Օդային ավազան	41
6.2.5	Արտանետումների հաշվարկ	42
6.2.6	Ջրօգտագործում և ջրահեռացում	50
6.2.7	Հողային ռեսուրսներ	52
6.2.8	Աղմուկ	55
6.2.9	Սոցիալական ազդեցություն.....	55
6.2.10	Գումարային ազդեցություն.....	56
6.3.	Ազդեցություններ շահագործման փուլում.....	56
6.3.1	Սոցիալ-տնտեսական հետևանքներ	56
7.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱԾՎԱՐԿ	56
7.1.	Մթնոլորտային օդ.....	57
7.2.	Ջրային ռեսուրսներ.....	59
7.3.	Հողային ռեսուրսներ	59
7.4.	Կենսաբազմազանություն	59
8.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱԴԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	60
8.1.	Ընդհանուր դրույթներ.....	60
8.2.	Բնապահպանական և սոցիալական միջոցառումներ և բնապահպանական կառավարման պլան	62
Հավելված 1: ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի տեղեկանք.....		94

Հավելված 2. 1 – 7 տեղամասերի արտանետումների ցրման հաշվարկների արդյունքները	95
Հավելված 3: Երթևեկության պլան	109
Հավելված 4. Ճարտարապետահատակագծային առաջադրանք	110

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀԲ	Համաշխարհային Բանկ
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլան
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՊՈԱԿ	Պետական ոչ-առևտրային կազմակերպություն
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
CO2	Ածխաթթու գազ
NO2	Ազոտի երկօքսիդ
NO	Ազոտի օքսիդ
SO2	Ծծումբի երկօքսիդ
CH	մեթիլիդին խումբ
ՅՕՄ	Ցնդող օրգանական միացությունների
CO	Ածխածնի երկօքսիդ
N2O	Ազոտային օքսիդ
ՊՄ	Պինդ մասնիկներ
ՎՏ	Տնտեսական վնաս
ՀԱԳ	Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով աղտոտում
ԶԱԳ	Զրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն
ՕԱԳ	Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկից ստացել է ֆինանսավորում՝ «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագրի» (SSԵԶ ծրագիր/Ծրագիր) իրականացման նպատակով: SSԵԶ ծրագրի նպատակն է՝ զբոսաշրջային ոլորտի ենթակառուցվածքի, ծառայությունների և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը և տեղական տնտեսությունում զբոսաշրջային ոլորտից ստացվող եկամուտների ավելացումը: Ակնկալվում է, որ Ծրագրի իրականացման արդյունքում կշահեն, մասնավորապես՝ Հայաստանի տարբեր մարզերի տեղաբնակները, զբոսաշրջիկները և ձեռնարկությունները: Վերանորոգված մշակութային ժառանգության վայրերում և քաղաքներում հանրային ենթակառուցվածքներն ավելի մեծ մատչելիություն և որակ կունենան, տարածաշրջանում կաճի մասնավոր հատվածի ներդրումների ծավալը, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկությունների քանակը: Կառավարությունը կշահի զբոսաշրջության ոլորտի ընդհանուր ծախսերի և զբոսաշրջիկների բավարարվածության բարձրացման, աշխատատեղերի ստեղծման, գործակալությունների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, ակտիվների շահագործման և պահպանման բարելավման առումով: SSԵԶ ծրագրի բաղադրիչներից մեկը վերաբերվում է հանրային ենթակառուցվածքի տրամադրմանը մասնավոր ներդրումներ ներգրավելու նպատակով:

Ներկայացվող գործունեության նպատակն է ստեղծել բարեկարգ, ժամանակակից և Գյումրի քաղաքի ընդհանուր ոճին ներդաշնակ զբոսաշրջային ենթակառուցվածքներ՝ պատմական, մշակութային ռեսուրսները համապատասխան ձևով ներկայացնելու համար, բարելավել քաղաքի համար կարևոր զբոսայգիները, քաղաքի պատմական կենտրոնի հանրային տարածքները, ճանապարհային ցանցը և ինժեներական ենթակառուցվածքը, ապահովել քաղաքային տրանսպորտի և զբոսաշրջային երթուղիների անխափան աշխատանքը և տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների և զբոսաշրջային օբյեկտների (հյուրատներ, ռեստորաններ և այլն) մատչելիությունը:

Ենթածրագիրը բաղկացած է հետևյալ 6 բաղադրիչներից, որոնցից 5-ի վերաբերյալ մանրամասն նկարագիրը ներկայացված է ստորև:

1. Խանջյան և Չայկովսկու փողոցների վերականգնում:
3. Մր. Ամենափրկիչ եկեղեցու հարակից այգու և հարող Աբովյան փողոցի աջ և ձախ հատվածների վերականգնում
4. Հաղթանակի պողոտայի վերականգնում
5. Աճեմյան, Հանեսօղյան ու Զիվանի փողոցների վերականգնում, բարեկարգում

6. Տերյան ու Նալբանդյան փողոցների վերականգնում, բարեկարգում:

Վերականգնման, բարեկարգման և արտաքին լուսավորության անցկացման արդյունքում քաղաքի կենտրոնական հատվածի երեք փողոց կստանան ժամանակակից, հարմարավետ և բնակչության բոլոր խմբերի համար մատչելի որակ, միաժամանակ պահպանելով իրենց պատմաճարտարապետական բնութագրերը: Բարեկարգ փողոցները և մայրերը մաս կլինեն քաղաքի պատմական կենտրոնի վերականգնման և վերակենդանացման ծրագրի:

Ներկայացվող գործունեությունը իրականացվելու է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման (SSԵԶ) ծրագիր» շրջանակներում:

Ներկայացվող գործունեության պատվիրատուն է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը:

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամը (ՀՏԶՀ) Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամի (ՀՄՆՀ) իրավահոջորդն է, իսկ վերջինս ստեղծվել է ՀՀ Կառավարության № 162 որոշման համաձայն՝ 11.04.2000թ որպես անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ համայնքներում փոքրածավալ ենթակառուցվածքների վերականգնմանը և կենսամակարդակի բարելավմանը աջակցելու նպատակով: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը հիմնադրվել է Սոցներդրումների հիմնադրամի վերակազմավորման հիմքի վրա՝ «2014-2025թթ. Հայաստանի հեռանկարային զարգացման ծրագրի» տարածաշրջանային զարգացման քաղաքականության շրջանակներում:

Սույն Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմվել է համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության << Շրջակա միջավայրի վրա ազդեցություն>> ՊՈԱԿ կողմից տրամադրված Տեխնիկական առաջադրանքի (ՏԱ 24, 20.04.2022թ.), ինչպես նաև ՀՀ օրենսդրության պայմաններին համապատասխան:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Նախատեսվող գործունեության նախագծման և շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանությանը, այդ օրենսդրությունից բխող ՀՀ կառավարության որոշումներով:

Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Սահմանադրություն

2. ՀՀ Հողային օրենսգիրք (02.05.2001թ.)
3. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.06.2002թ.)
4. ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (28.11.2011 թ.)
5. Թափոնների մասին ՀՀ օրենք (24.11.2004 թ.)
6. Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենք (07.02.2012թ.)
7. Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք (01.11.1994թ.)
8. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (21.06.2014թ):
9. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման մասին ՀՀ օրենք (11.11.1998 թ.):
10. ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշում “Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին”:
11. ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրաման «Կազմակերպություններում Աշխատողների Սանիտարակենցաղային Սենքերի» N 2.2.8-003-12 Սանիտարական Կանոնները և Նորմերը Հաստատելու Մասին:
12. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի թիվ 79-Ն հրաման ՀՀՇՆ22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին:
13. ՀՀ կառավարության 9 սեպտեմբերի 2004 թվականի N 1270-Ն որոշում «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին»:
14. ՀՀ կառավարության 20 ապրիլի 2002 թվականի N 438 որոշումը «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման օգտագործման կարգը հաստատելու մասին»:
15. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),
16. -«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),
17. -«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),
18. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,
19. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,

20. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,
21. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում:

Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ կապված շրջակա միջավայրի կառավարման խնդիրների հետ՝ ՀՀ Բնապահպանության նախարարության <http://www.mnp.am/?p=201> համացանցային կայքում առկա ցանկով: Ցանկում ներառված է նաև ՄԱԿ-ի ԵՏՀ Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին, հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիան (Օրհուս, 1998թ.):

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում (Օրենք) փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության իրականացման դեպքում անհրաժեշտ է շրջակա միջավայրի ազդեցության գնահատման դրական պետական փորձաքննական եզրակացություն, որը տրվում է լիազոր մարմնի (ՀՀ շրջակա միջավայրի նախարարության <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ) կողմից: Նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ազդեցությունները պետք է գնահատվեն մինչև նախատեսվող գործունեության իրականացման փուլը:

Նշված գործունեությանը համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության <<Շրջակա միջավայրի վրա ազդեցություն>> ՊՈԱԿ կողմից տրամադրված Տեխնիկական առաջադրանքի (ՏԱ 24, 20.04.2022թ.), ինչպես նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի հոդված 14, կետ 8-ի այն է՝ փորձաքննության ենթակա են նաև սույն հոդվածի 3-րդ մասում չթվարկված բոլոր նախատեսվող գործունեությունները, որոնք իրականացվելու են բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքներում, պատմամշակութային հուշարձանների սահմաններում, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում: Այս դեպքում փորձաքննությունն իրականացվում է Բ կատեգորիայի ընթացակարգով:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

3.1. Աշխարհագրական դիրքը և ռելիեֆը

Նախատեսվող գործունեության տարածքը վարչականորեն գտնվում է Շիրակի մարզում: Տեղամասի ռելիեֆը սարահարթային է: Բացարձակ բարձրությունների նիշերը տատանվում են 1500-1700 սահմաններում: Ռելիեֆի ծագումնային տիպը կուտակումային է՝ ներկայացված լճալյուվիալ նստվածքներով և մասամբ հրաբխային է՝ ներկայացված ծալքավոր կառուցվածքների թույլ մակերեսին տարածված ձեղքային արտավիժման լավային ծածկույթներով: Տեղամասի բուսականությունը տափաստանային է՝ ներկայացված կծմախոտային տափաստաններով, ինչպես նաև կուլտուրականացված ծառատեսակներով և թփերով:

3.1.1 Երկրաբանություն

Հողերը լեռնատափաստանային են՝ ներկայացված չափավոր խոնավ տափաստանների լեռնային կարբոնատային և տիպիկ սևահողերով:

Տեղամասը մտնում է Ախուրյան-Հրազդանի լանդշաֆտաջրաբանական շրջանի մեջ: Միջին հոսքը 1 քառ. կմ տերիտորիայից 2,5 լ/վրկ է: Տեղամասի հարթավայրային մասում սելավներ չեն լինում, նախալեռնային հատվածում՝ միջին ակտիվության սելավներ (սելավները կրկնվում են 3-10 տարին մեկ անգամ):

Տեղամասում տարածված են չորրորդական լճագետային նստվածքների չստորաբաժանված կոմպլեքսի ջրեր: Գրունտային ջրերի ամենավերին հորիզոնն ըստ զրականության և նախկինում հորատված հորատանցքերի՝ գտնվում է 3.0-3.5 մ խորության վրա, որի մակարդակը ենթակա է փոփոխության՝ ելնելով տարվա ընթացքում մթնոլորտային տեղումների և մակերևութային ջրերի հաշվեկշռի տատանումներից: Բոլոր տիպի ջրերը չունեն ագրեսիվություն բետոնի նկատմամբ:


Ըստ ակնադիտական, բնական մերկացումների և հորատման տվյալների՝ տեղամասում ժամանակակից ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները, որոնք կարող են վնասակար ազդեցություն ունենալ ա/ճ-ի վերանորոգման և շահագործման համար, այն է՝ սողանքներ, փլվածքներ, քարացրոններ, ձորակառաջացման պրոցեսներ կամ բացակայում են, կամ շատ թույլ են արտահայտված, մասնավորապես առկա են ֆիզիկական հողմահարման:

3.1.2 Մեյամուղգիա

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է բարձր սեյսմիկ վտանգի գոտում (Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն.

Նախագծման նորմերում» ներառված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի հաստատված քարտեզ) (8-9 բալ` ըստ Ռիխտերի սանդղակի և 0.4 g` առավելագույն հորիզոնական արագացում): 1988 թ.-ին ՀՀ հյուսիսային շրջաններում տեղի ունեցավ ըստ Ռիխտերի սանդղակի 6.9 բալ ուժգնությամբ երկրաշարժ, որը, ցավոք, մեծ քանակությամբ մարդկային զոհերի և ավերածությունների պատճառ դարձավ, ուստի նախագծային աշխատանքների ժամանակ պետք է հաշվի առնվի սեյսմիկ վտանգի գործոնը, որը ըստ Հայաստանի Հանրապետության տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզի` ՀՀԸՆ 20.04.2020թ. տեղամասը գտնվում է II սեյսմիկ գոտու մեջ $A_{max}=0.4g$ բնահողերն ըստ սեյսմիկ հատկությունների, պատկանում են բեկորախճային բնահող II կարգի:

Պատկեր 1. Հայաստանի հանրապետության տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ



3.2. Կլիմա, օդի որակ և աղմուկ

Բնապահպանական ելակետային տվյալներ հավաքագրելիս ՇՄԱԳ թիմն օգտագործել է բոլոր հասանելի աղբյուրները:

3.2.1 Կլիմա

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է 1556-II կլիմայական գոտում, որտեղ հուլիսին օդի միջին ջերմաստիճանը 19.5°C աստիճան է: Առավելագույն ջերմաստիճանը հասնում է 38°C: Ամենացուրտ ամսվա միջին ջերմաստիճանը -9.0°C է: Նվազագույն ջերմաստիճանը հասնում է -36°C-ի: Կայուն ձնածածկույթը պահպանվում է միջինը 1-ից 3 ամիս: Առանց սառնամանիքի օրերի թիվը տատանվում է միջինը 200-ից 240 օրերի միջակայքում: Ձնաբքոտ օրերի թիվը 5-10 օր է: Տարեկան տեղումների քանակը կազմում է 498 մմ: Տարեկան գոլորշունակությունը 900-1100 մմ է և օդի միջին հարաբերական խոնավությունը տատանվում է 40%-ից (ամռանը) 75% (ձմռանը): Քամիների ուղղությունները հիմնականում հյուսիսային և հյուսիս-արևմտյան են:

Լեռնային երկրներին հատուկ օրինաչափությամբ՝ ՀՀ-ում կլիմայական գոտիները փոխվում են ըստ բարձրության: Ներկայացվող տարածքի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտվել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրամանով հաստատված «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ II-7.01-2011 փաստաթղթից:

Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Գյումրի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութա- բանական կայան	Օդերևութաբանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան C°	Բացարձակ նվազագույն C°	Բացարձակ առավելագույն C°
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Գյումրի	1528	-9,0	-7.2	-1.2	6.7	11.7	15.5	19.5	19.5	15.2	8.5	1.7	-5.1	6.3	-36	38

Օդի հարաբերական խոնավությունը Գյումրի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութա- բանական կայան	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
														հունվարին	օգոստոսին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Գյումրի	83	82	76	68	69	66	62	60	63	70	75	84	72	71	39

Մթնոլորտային տեղումները Գյումրի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Ձնածածկույթ		
	Ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային բարձրությունը,սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի Առավելա-գույն քանակը,մմ
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12				
Գյումրի	23	25	30	55	90	71	46	36	31	39	28	24	498	50	53	152

Քամի

Բնակավայր, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնճում, (հՊա)		Կրկնելիությունը, % ուղությունների Միջին արագություն, մ/վ <							
--	--	--	---	--	--	--	--	--	--	--

3.2.2 Օդի որակ

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի» ՊՈԱԿ կողմից:

Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից օդերևութաբանական դիտարկումներ կատարվում են հանրապետության տարածքի 47 (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայանում: Դիտարկումներն իրականացվում են Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան՝ 3 ժամը մեկ անգամ՝ սկսած ժամը 00:00-ից (Գրինվիչի ժամանակով), մթնոլորտային երևույթների և եղանակի վիճակի վերաբերյալ իրականացվում են շուրջօրյա դիտարկումներ:

Ներկայումս մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160-Ն որոշման:

Ըստ Էկոմոնիթորինգի 2020 թվականի ՀՀ շրջակա միջավայրի վիճակի մասին տեղեկագրի Գյումրի քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է 24 դիտակետ և 1 դիտակայան:


2020 թվականին քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:


Իրականացված դիտարկումների 6%-ում դիտվել են փոշու, 4%-ում՝ ծծմբի երկօքսիդի, 2.3%-ում՝ ազոտի երկօքսիդի գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ներից:

Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում արդյունաբերությունը և քաղաքաշինությունը:



Նախորդ տարվա համեմատությամբ ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիան նվազել է աննշան (2%), իսկ ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան է աննշան (2%): Փոշու կոնցենտրացիան՝ նախորդ տարվա համեմատ, նվազել է 1.6 անգամ:


Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխություններ






Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիաների փոփոխությունները և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները







3.2.3 Աղմուկ

Ուսումնասիրվող տարածքի վրա բացասաբար է ազդում նաև տրանսպորտային աղմուկը: Աղմուկի որոշակի բարձրացում սպասվում է նաև շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ:

Աղմուկի մակարդակի ուսումնասիրման նպատակով, մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կիրականացվի աղմուկի գործիքային չափման աշխատանքներ, որի արդյունքները կընդունվեն, որպես ելակետային (Ֆոնային) հետագա աշխատանքների իրականացման համար:

3.3. Ջրային ռեսուրսներ

3.3.1 Ջրային ավազան

Շիրակի մարզի հիմնական գետը Ախուրյանն է, որը սկիզբ է առնում Արփի լճից և հանդիսանում է Արաքս գետի առաջին վտակը: Այն սկսվում է 2017մ բարձրությունից և ունի 186 կմ երկարություն, որը միջին և ստորին հատվածներում ձևավորում է Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը թափվելով Արաքս գետ իր գետաբերանից 708 կմ վրա: Ախուրյան գետի ջրբաժանը 9700ք կմ է, որից 2784քկմ գտնվում է Հայաստանում: Ախուրյան գետը միակ ջրային աղբյուրն է երկրի արևմտյան մասի համար, որի ջուրն օգտագործվում է և գյուղատնտեսական և արդյունաբերական նպատակներով: Ջուրը գետից վերցնում են ոռոգման համար մի շարք ջրանցքների միջոցով:

Ախուրյան գետի ջուրը մեծամասամբ օգտագործվում է ոռոգման նպատակներով, քանի որ տարածքում գյուղացիները ակտիվորեն զբաղվում են գյուղատնտեսությամբ, մասնավորապես՝ այգեգործությամբ, հողագործությամբ և անասնապահությամբ: Ախուրյան գետի ջուրը օգտագործվում է Գյումրիի, Արթիկի և Ախուրյանի ձեռնարկատիրական, արդյունաբերական նպատակներով, որոնք հանդիսանում է գետի պոտենցիալ աղտոտող:

Ախուրյանի հիմնական վտակներից են՝ Գյումրիգետը, Ջաջուրգետը և Կարկաչունը, որոնք չորանում են ամառային սեզոնի ընթացքում:

3.3.2 Լճեր, ջրամբարներ և ստորգետնյա ջրեր

Ուսումնասիրվող տարածքում և նրա մոտակայքում բացակայում են լճերը: Արփի լիճը, որը գտնվում է Շիրակի հյուսիս-արևմտյան անկյունում բնապահպանական տեսանկյունից առավել կարևոր լճերից մեկն է, որն աջակցում է վայրի բնության մի քանի յուրահատուկ և անհետացող տեսակների: Արփին, իր 20 կմ² մակերեսով և միայն 8մ առավելագույն խորությամբ սնվում է Եղնաջուր, Կարմրաջուր և Էլալ գետերով:

Արփի լիճը վերածվել է ջրամբարի, որը գտնվում է գետի վերին հոսանքում, իսկ նրա մեջտեղում հոսում է ամենամեծ ջրամբարը Հայաստանում՝ Ախուրյան ջրամբարը (525 մմ³), այն դեռ կառուցվում է: Մի շարք փոքր ջրամբարներ նույնպես սնվում են Ախուրյան գետից:

Ստորերկրյա ջրային ռեսուրսները գտնվում են 5.4 – 6.2մ խորության վրա, սակայն ջրի տարեկան տատանման պատճառով ստորգետնյա ջրերի մակարդակը կարող է բարձրանալ մինչև 0.5 – 0.8մ. Ստորերկրյա ջրային ռեսուրսները պատկանում են ոչ ճնշումային ջրային հորիզոնին:

3.3.3 Ջրերի ֆոնային աղտոտվածությունը

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոօթերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 93 դիտակետ Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա, որոնցում կատարվում են ամենօրյա դիտարկումներ ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների դիտարկումներ և ջրի ելքի չափումներ:

ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե ջրի որակի տարբեր ցուցանիշներ ընկնում են որակի տարբեր դասերի մեջ, ապա վերջնական դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը:

Ուսումնասիրվող հատվածները ընդգրկված են Ախուրյանի Ջրավազանային Կառավարման Տարածքում, որը ներառում է Ախուրյանի և Մեծամորի գետավազանները:

Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում կոմունալ- կենցաղային կեղտաջրերը:

Մակերևութային ջրերի որակ


Ախուրյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով: Գյումրի քաղաքից

վերև և Բագարան գյուղից ներքև ընկած հատվածներում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով, մանգանով, երկաթով, ընդհանուր ֆոսֆորով և կախյալ նյութերով: Գյումրի քաղաքից ներքև ընկած հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ իոններով և երկաթով:

Աշոցք գետի ջրի որակը Մուսայեյան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի հնգօրյա կենսաբանական պահանջով, արսենով, երկաթով և բորով:

Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, թթվածնի հնգօրյա կենսաբանական պահանջով, թթվածնի քիմիական պահանջով, ֆոսֆատ իոնով և ընդհանուր ֆոսֆորով:

Պատկեր 2. ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2020 թվական



3.3.4 Հողեր, էրոզիա և հողի աղտոտում

Շիրակի մարզը իր բերրի հողի և հողատեսակների առումով ներառված է Ախուրյան-Սպիտակ և Աշոցքի շրջանում: Այստեղ գերիշխում են բերրի, կրակավ, մարգագետնային հողերը որոնք խթանում են ցորենի, կարտոֆիլի, այգիների ու բանջարեղենի, ծխախոտի մշակմանը: Բերրի հողեր, մարգագետնային բարեբեր, գետահովտա-սարահարթային և վերգետնյա հողերը բնորոշ են տափաստանային հողերի գոտուն:

Բերրի հողերը գտնվում են Շիրակի բարձրավանդակից և մի փոքր զառիվայր լեռներից 1300-2450մ բարձրության վրա: Տարբեր հումուսի տեսակներ (3.5 – 12 %), միջին տարատեսակներ (35 – 55 մգ/համ.), բարձր խառնուրդներ՝ մասամբ ալկալինի և աղակալված (pH 6.8 – 8.2) ինչպես նաև ջրի տարբեր ֆիզիկական հատկություններ առկա են այստեղ:

Մարգագետնային բերրի հողերը գտնվում են բերրի հողերի տափաստանային մասերում շնորհիվ խոնավ ծածկի: Նրանք մեծամասամբ սփռված են Շիրակի բարձրավանդակում և ջրային երկրաբանական պայմանների շնորհիվ այստեղ նկատելի է հումուսի (10 – 13%), որը ցածրադիր գոտիներում դառնում է կավային: Աղակալման ռեակցիայի շնորհիվ նկատելի են կատիոններ 100 գր հողում մինչ 57 մգ/համ. Գետահովտա-սարահարթային հողերը ձևավորվել են գետերի մերձակա հովիտներում:

Գյուղատնտեսական հողերը, որոնք երկար ժամանակ չեն մշակվել վերածվել են ավելի քարոտ, կարծր տարածքի, որտեղ հումուսի միջին շերտը (2 – 4 %), թույլ ալկալինի ազդեցությամբ (pH 6.9 – 8.1) և տարբեր խառնածիններ (14 – 35 մգ/համ) և որտեղ զգալի է մագնեզիումը:

Տափաստանները, որոնք Շիրակի մարզի հիմնական պատկերն են տարածվում են Շիրակի դաշտավայրից մինչ Աշոցք: Հացահատիկի և խոտի հարթավայրերը գերիշխում են Շիրակի դաշտավայրում, իսկ Աշոցքում՝ մարգագետնային հարթավայրերը: Նույնիսկ լանդշաֆտի աննշան փոփոխությունը փոխում է նաև բերրի հողի հատկությունը: Նրանց հզորությունը թուլացնում է, հումուս կոնցենտրացիան նվազում է, մեխանիկա կազմը դառնում ավելի թեթև: Բերրի հողերում հումուսը 5% է:

Տարածքի համեմատաբար հասարակ մասերը հիմնականում ծածկված են տարբեր տեսակի աղազերծված բերրի հողերով, մարգագետնային տափաստաններով: Բերրի հողերը, որոնք մեծ տարածում ունեն Շիրակի մարզում, հանրապետության ամենաբերրի հողերից են: Հասարակ մակերևույթը, թույլ արտահայտված էրոզիան և կլիմայական առանձնահատկությունները բարենպաստ են հացահատիկների և մի շարք այլ մշակաբույսերի աճեցման համար:

Ծրագրի տարածաշրջանի հողերի աղտոտման վերաբերյալ տվյալները բացակայում են, քանի որ այն իրականացվելու է Գյումրի քաղաքի արդեն իսկ կառուցապատված հատվածներում:

Ծրագրի իրականացման տարածքում բացակայում են հատման ենթակա ծառերը, թփերը, նաև հողային ծածկույթը և բուսահողը, քանի որ ուսումնասիրվող տարածքն ամբողջովին կառուցապատված է:

3.4. Կենսաբազմազանություն

3.4.1 Բուսական աշխարհ

Շիրակի մարզը երկրի մնացած հատվածից տարբերվում է իր հակադրությամբ հարավում՝ կիսաանապատից անապատային, լեռնային տափաստաններով մինչդեռ հյուսիսային տարածքը՝ ալպյան մարգագետիններով, որը հայտնի է որպես հայկական ալպեր: Շիրակի բուսականությունը միատար չէ և այս շրջանում չկան անտառներ:

Հյուսիսային Շիրակի ֆլորայում հանդիպելի են *Iris lineolata*, *I. Caucasica*, *Merenderamirzoeval*, *Colchicum Szoritsii*, *Gagea* ssp., *Puschkiniascilloides*, *Draba* ssp., *Lallemautiacaneseus*, *Ranunculus* ssp., *Myosotisalpestris*, *Pedicularis* ssp., *Trifolium* ssp. բույսերը:

Ցածրադիր գոտում՝ *Gladiolus atrovioleaceus*, *Nigella oxypetala*, *Actynolemamacrolema*, *Gundeliatournefort*, *Verbascumsaccatum*, *Lallemanitaiberica*, *Roemeriaretracta*, *Scabiosaargentea*, *Scorrone aposa*, *Muscaribeglecta*, *Stchysinflata*, *Astragalusdistyophysus*, *A. kochianus*, *Achilleatenuifolia*, *Helichrysumrubicundum*, *Silenaspergulifolia*.

Գետի կիրճի բուսական աշխարհը ներառում է՝ *Alkanna orientalis*, *Cerasus incana*, *Prus, salicifolia*, *Cerasus mahaleb*, *Amygdalus ferzlinia*, *Spirala crenata*, *Saxifraga cymbalaria*:

Անապատային և կիսաանապատային ֆլորան ներառում է՝ վայրի եղեսպակ, տափաստանային խոտ, ծղոտածաղիկ, կակաչ և մարգարիտկա:

Ծրագրի իրականացման տարածքը հիմնականում ծածկված է հացահատիկի բույսերով և *Festucaval Gaudin*, *F. ovina* L., *Koeleriaalbovii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Bothriochloaischaemum* (L.) Keng, *Stipacapillata* L., *S. Lessingiana* Trin.et Rupr., *S. tirsavStev.*, *Elytrigiatrichophora* (Link) Nevski, *Galiumverum* L., *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*, and *Daturastramonium*.

Ծրագրի իրականացման տարածքում ՀՀ բույսերի Կարմիր Գրքում գրանցված բուսատեսականներ չկան:

Քանի որ ծրագրի տարածքը գտնվում է Գյումրի քաղաքի խառը կառուցապատման գոտում, ուստի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման շրջանակներում չի դիտարկվում նշված տարածքի բուսական աշխարհի վրա ազդեցություններ:

3.4.2 Կենդանական աշխարհը

Ի տարբերություն բույսերի, կենդանիները շարժուն են և կարող են հարմարվել տարբեր լանդշաֆտային պայմաններին: ՀՀ Շիրակի մարզի գերիշխող ժայռային կառուցվածքը և բուսականությունը եզակի էկոհամակարգ է լի անապատային վայրի աշխարհով և գարնանն ու աշնանը միգրանտ թռչուններով:

Գյումրիից Վրաստանի սահման՝ հողը դանդաղորեն բարձրանում է մինչ Ջավախք լեռնաշղթա: Չնայած որ, այս տարածքը տարվա ընթացքում Հայաստանի ամենացուրտ մասն է, այն լի է ցանցաղ ճահիճներով, որը հարմար է ջրլող թռչունների և արագիլների համար:

Լեռնատափաստանային և ենթաալպյան գոտիներում առկա են հետևյալ տեսակները՝ *Vertigo substrata*, *Euxinasomchetica*, *Caucasian olophrum*, *Pterostrichus*, saddle and steppe sagas are spread. Among mammals the following species occur here: *Lepuseuropaeus*, *Vulpesvulpes*, *Canis lupus*, *Muridae*, *Microtinae*. Herpenthofauna here is poor, mainly being represented by *Lacertavalentini*, *Viperadarevskii*, *Viperaerivanensis* species: Իսկ թռչուններից տարածված են՝ *Passeriformes* և *Falconoformes* տեսակները:

Քանի որ ծրագրի տարածքը գտնվում է Գյումրու քաղաքային միջավայրում, որտեղ առկա է տրանսպորտային երթևեկություն, աղմուկ և այլն ուստի կենդանատեսակների առկայություն կամ տվյալ տարածքում հանդիպելու հնարավորություն չի դիտարկվում:

3.4.3 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ծրագրի իրականացման և հարակից տարածքներում չկան ԲՀՊՏ-ներ՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ բնության գրանցված հուշարձաններ:

3.5. Հնագիտական, պատմական, բնական և մշակութային հուշարձաններ

Ծրագրի իրականացման վայրն է «Կումայրի» պետական պատմաճարտարապետական արգելոցը: Այն հիմնվել է 1980թ. և ընդգրկում է Գյումրի քաղաքի պատմական միջուկը: «Կումայրի» պետական պատմա-ճարտարապետական արգելոցի պահպանման տարածքը կազմում է մոտ 1000 հա:

«Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանն¹ իր մեջ ներառում է քաղաքի դարավերջի կառուցապատման սահմանները, ինչպես նաև Ախուրյան գետի ձախափնյա կիրճի լանդշաֆտները: Կառուցապատված հատվածում պահպանվում են XIX դարի ընթացքում կազմավորված փողոցային ցանցը, պատմաճարտարապետական հուշարձանների կարգավիճակ ունեցող շուրջ 1022 կառույց, այդ թվում՝ բնակելի, հասարակական, արդյունաբերական, ռազմապաշտպանական, պաշտամունքային և այլ նշանակության շենքեր ու շինություններ:

Գյումրու ավագանու 2004 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ արգելոց-թանգարանի տնօրինությունը որպես ենթաբաժին ընդգրկվել է Գյումրու քաղաքապետարանի քաղաքաշինության բաժնի կազմում:

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջարկվել է փոփոխել Գյումրի քաղաքի «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի իրավական կարգավիճակը՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կամ Գյումրու քաղաքապետարանի համակարգում, կամ մարզպետարանի ենթակայությամբ պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպմամբ:

Սույն ենթածրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել աշխատանքներ «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի մի շարք հատվածներում՝

1. Խանջյան և Չայկովսկու փողոցների վերականգնում և Հաղթանակի պողոտայի վերականգնում;
2. Մբ. Ամենափրկիչ եկեղեցու հարակից այգու և հարող Աբովյան փողոցի աջ և ձախ հատվածների վերականգնում;
3. Աճեմյան, Հանեսօղյան և Զիվանի փողոցների վերականգնում Տերյան և Նալբանդյան փողոցների վերականգնում:

¹ՀՀ կառավարության 12 հունիսի 2008 թվականի n 642-ա որոշում Գյումրի քաղաքի պատմամշակութային եվ քաղաքաշինական միջավայրի վերականգնման ու զարգացման (Կումայրի) ծրագրի եվ ՀՀ քաղաքաշինության նախարարությանը գումար հատկացնելու մասին: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=45159>

ՀՀ կառավարության N 1270-Ն (սեպտեմբերի 9-ի 2004թ.) որոշումով հաստատվել է Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը², որը ներառում է «Գումայրի» պետական պատմա-ճարտարապետական արգելոցը և որի հավելվածում մանրամասն ներկայացված են պատմական արժեք ներկայացնող բոլոր կառույցները :

Ենթածրագրի ճարտարապետահատակագծային առաջադրանքները ներկայացված է հավելված 4-ում:

3.6. Սոցիալ տնտեսական պայմանները

“Գյումրի քաղաքի զբոսաշրջության ենթակառուցվածքների և ճանապարհների վերակառուցում” ենթածրագրի իրականաման վայրն՝ Գյումրի քաղաքը, որը գտնվում է Շիրակի մարզում, ուստի բոլոր ենթակառուցվածքների և ճանապարհների շինարարական գործունեության ազդակիր համայնքը Գյումրի քաղաքն է:

3.6.1 ՀՀ Շիրակի մարզ

ՀՀ Շիրակի մարզը գտնվում է հանրապետության հյուսիս-արևմուտքում:

Մարզի տարածքով են անցնում Հայաստանը Վրաստանին կապող գլխավոր երկաթգիծը և ավտոմոբիլային խճուղին: Այստեղ իրար են միանում Հայաստանի և Թուրքիայի երկաթուղային և ավտոճանապարհային ցանցերը: Թուրքիայի հետ սահմանային Ախուրյան գետի վրա գործում է Ախուրյանի ջրամբարը, որն իր 526 մլն. մ3 ծավալով խոշորագույնն է հանրապետությունում:

2020թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 2.9 %,
- գյուղատնտեսություն՝ 10.0 %,
- շինարարություն՝ 4.0 %,
- մանրածախ առևտուր՝ 4.3 %,
- ծառայություններ՝ 1.4 %:

² Համաձայն ՀՀ կառավարության սեպտեմբերի 9-ի 2004թ. «ՀՀ Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 1270-Ն որոշում, հավելված:

Շիրակի մարզի արդյունաբերության առաջատար ճյուղերն են սննդամթերքի և խմիչքների և ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը: Հայտնի են Արթիկի, Անիի տուֆն ու պեմզան: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով (մարզում գործում է օդանավակայան, որն ապահովում է օդային կապ արտաքին աշխարհի հետ): Մարզի որոշ սոցիալ-տնտեսական ցուցանիշներ բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Շիրակի մարզի բնութագրերը

Տարածքը	2 680 քառ.կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	9.0 %
Համայնքներ, 2021թ. տարեկգրի դրությամբ	42
Քաղաքներ	3
Գյուղեր	127
Բնակչության թվաքանակը 2021թ. տարեկգրի դրությամբ	231 հազ.մարդ
քաղաքային	135.2 հազ. մարդ
գյուղական	95.8 հազ.մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2020թ., %	7.8 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2020թ.,	58.5 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	210 874.0 հա
այդ թվում՝ վարելահողեր	78 135.5 հա

3.6.2 Ագդակի համայնքներ

Գյումրի

Մակերես՝ 36.26 կմ²

Շիրակի մարզկենտրոն հանդիսացող Գյումրի քաղաքը գտնվում է Երևանից 118 կմ հեռավորության վրա:

Քաղաքը գտնվում է Ախուրյան գետի ձախ ափին: Այն բնակչության թվաքանակով և իր նշանակությամբ համարվում է Հայաստանի Հանրապետության երկրորդ քաղաքը: Քաղաքի կարգավիճակ ունի 1837 թվականից:

Գյումրին միշտ եղել է արվեստի և մշակույթի քաղաք: 1912թ. առաջին անգամ Գյումրիում է բեմադրվել Ա.Տիգրանյանի «Անուշ» օպերան և դրվել ազգային օպերային թատրոնի հիմքը, 1935թ. հիմնադրվել է տիկնիկային թատրոնը՝ առաջին մանկական թատրոնը Հայաստանում: 1920թ. հունվարին Գյումրի քաղաքում բացվել է առաջին համալսարանը Հայաստանում: 1988թ. ավերիչ երկրաշարժից 30 տարի անց վերականգնվող Գյումրին շարունակում է մնալ Հայաստանի Հանրապետության մշակութային կարևոր օջախներից մեկը, իսկ «Կումայրի» արգելոց-թանգարանը յուրօրինակ խթան է զբոսաշրջության զարգացման համար: Քաղաքում զարգացած է մշակող արդյունաբերությունը:

Քաղաքը լի է արձաններով ու հուշարձաններով, գեղեցիկ այգիներով ու պուրակներով: Գյումրվա ուրույն ճարտարապետության հիմքում ընկած են Անիի և Կարսի ճարտարապետական ոճերը:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1. Խանջյան և Չայկովսկու փողոցների վերականգնում

Գյումրի քաղաքի «Բարեկամության» այգուն հարող Խանջյան փողոցի մոտ 0.53 կմ և Չայկովսկու փողոցի մոտ 0.63 կմ հատվածների երթևեկելի մասերի և մայթերի վերականգնում՝ Խանջյան փողոցը՝ այգուն հարակից մայթով, Չայկովսկու փողոցը իր երկու մայթերով: Խանջյան փողոցում ասֆալտի ծածկույթի փոխարինում իր նախապատրաստական շերտով, Չայկովսկու փողոցում՝ ճանապարհի ամբողջական վերականգնում բոլոր նախապատրաստական շերտերով, մայթերի ծածկույթը իրականացվելու է քարե կամ բետոնե սալիկներով:

Միաժամանակ, անհրաժեշտ է ապամոնտաժել չգործող էլեկտրամատակարարման, կապի և այլ չօգտագործվող գծերը/սյուները, կանոնակարգել գոյություն ունեցող էլեկտրամատակարարման, գազամատակարարման և կապի օղային/վերգետնյա գծերը, որտեղ հնարավոր է վերատեղադրել դրանք ստորգետնյա եղանակով, իրականացնել Խանջյան փողոցի անձրևաջրերի հեռացման համակարգի վերանորոգման, կոյուղագծի վերանորոգման/վերակառուցման աշխատանքները, կազմակերպել երկու փողոցների արտաքին լուսավորությունը, տեղադրել ժամանակակից էներգախնայող լուսատուներ: Տարածքը բարեկարգել և հարմարեցնել բնակչության սակավաշարժ խմբերի համար, տեղադրել նստարաններ, աղբամաններ, զբոսաշրջային ցուցանակներ:

4.2. Սբ. Ամենափրկիչ եկեղեցու հարակից այգու և հարող Աբովյան փողոցի աջ և ձախ հատվածների վերականգնում

Նախաընտեսվում է իրականացնել այգու հենապատի նորոգում, սալահատակի փոխարինում, եկեղեցի տանող և շատրվանի չորս կողմից գոյություն ունեցող աստիճանների նորոգում և ըստ անհրաժեշտության վերաշարում, չգործող շատրվանի վերակառուցում, անհրաժեշտ սարքավորումների տեղադրում, շատրվանի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցում/վերակառուցում, այգու տարածքում տեղադրված էլեկտրամատակարարման կետային օբյեկտների կանոնակարգում/արդիականացում/ հնարավորության դեպքում՝ տեղափոխում/, արտաքին լուսավորության կազմակերպում, ժամանակակից էներգախնայող լուսատուների տեղադրում, տարածքի հնարավորինս հարմարեցում հաշմանդամների համար, բարեկարգում, կանաչապատում, կահավորում՝ նստարանների, աղբամանների, զբոսաշրջային ցուցանակների տեղադրում:

Այգու մակերեսը՝ 1.2 հա:

Այգու և այգուն հարակից փողոցների վերականգնման և բարեկարգման արդյունքում քաղաքը կստանա նոր ժամանակակից բարեկարգ հանրային տարածք, որը գրավիչ վայր կդառնա քաղաքի բնակիչների և հյուրերի համար: Ծրագրի իրականացումը կունենա դրական ազդեցություն քաղաքային միջավայրի վրա՝ տարածքի վերակենդանացման, բարեկարգման, շատրվանի թողարկման և տարածքի կանաչապատման շնորհիվ:

Աբովյան փողոցի աջ (0,38 կմ) և ձախ 0,23 կմ հատվածներում.

Այգու երկու կողմերով անցնող Աբովյան փողոցի երթևեկելի մասի և մայրերի վերականգնում, անձրևաջրերի հեռացման համակարգի վերականգնում, կոյուղագծի նորոգում, ըստ անհրաժեշտության շենքերի մուտքերի կարգավորում, էլեկտրամատակարարման, կապի, գազամատակարարման գծերի կանոնակարգում/վերատեղադրում, չգործող գծերի ապամոնտաժում, արտաքին լուսավորության կազմակերպում, ժամանակակից էներգախնայող լուսատուների տեղադրում, տարածքի հարմարեցում հաշմանդամների համար, բարեկարգում, կանաչապատում, կահավորում՝ նստարանների, աղբամանների, զբոսաշրջային ցուցանակների տեղադրում:

Աբովյան փողոցը Վահան Չերազ փողոցի հատումից մինչև Տերյան փողոցի հետ հատումը, ընդամենը՝ 0.62 կմ:

4.3. Աճեմյան, Հանեսոլյան, Ջիվանի փողոցների վերականգնում և բարեկարգում՝

Աճեմյան (0,67կմ), Հանեսոլյան (0.35կմ) և Ջիվանի (0.7կմ) փողոցների երթևեկելի հատվածների և մայրերի վերանորոգում, ծածկույթների փոխարինում, ըստ անհրաժեշտության նաև տների մուտքերի կանոնակարգում/նորոգում (փողոցների ընդհանուր երկարությունը՝ 1.72 կմ), ինժեներական ենթակառուցվածքների վերականգնում, մասնավորապես՝ անձրևաջրերի հեռացման համակարգի վերակառուցում և կառուցում՝ որտեղ հնարավոր է, կոյուղագծերի վերակառուցում/կարգավորում, արտաքին լուսավորության կազմակերպում, ժամանակակից էներգախնայող լուսատուների տեղադրում:

Միաժամանակ անհրաժեշտ է կանոնակարգել/վերատեղադրել գոյություն ունեցող էլեկտրամատակարարման, գազամատակարարման և կապի օդային/վերգետնյա գծերը, բարեկարգել տարածքը և հարմարեցնել բնակչության սակավաշարժ խմբերի համար, տեղադրել նստարաններ, աղբամաններ, զբոսաշրջային ցուցանակներ:

4.4. Տերյան և Նալբանդյան փողոցների վերականգնում և բարեկարգում

Տերյան և Նալբանդյան փողոցների երթևեկելի մասի (Տերյան փողոցը Տիգրանյան խաչմերուկից մինչև Նալբանդյան փողոց, Նալբանդյանը՝ մինչև Օգանյան փողոցի հետ հատում) և մայրերի վերականգնում, ըստ անհրաժեշտության նաև տների մուտքերի կանոնակարգում/նորոգում (փողոցների ընդհանուր երկարությունը՝ 1.16 կմ), ինժեներական ենթակառուցվածքի՝ անձրևաջրերի հեռացման համակարգի, կոյուղագծի վերակառուցման աշխատանքներ, արտաքին լուսավորության կազմակերպման, էներգախնայող լուսատուների տեղադրման աշխատանքներ:

Միաժամանակ անհրաժեշտ է կանոնակարգել գոյություն ունեցող էլեկտրամատակարարման, գազամատակարարման և կապի օդային/վերգետնյա գծերը, որտեղ հնարավոր է վերատեղադրել դրանք ստորգետնյա եղանակով, ապամոնտաժել չգործող գծերը, բարեկարգել տարածքը և հարմարեցնել բնակչության սակավաշարժ խմբերի համար, տեղադրել նստարաններ, աղբամաններ, զբոսաշրջային ցուցանակներ:

Բաղադրիչ 5-ով նախատեսված՝ Աճեմյան, Հանեսոլյան, Ջիվանի և Բաղադրիչ 6-ով նախատեսված՝ Տերյան, Նալբանդյան փողոցների վերականգնման, բարեկարգման և արտաքին լուսավորության անցկացման արդյունքում քաղաքի կենտրոնական հատվածի երեք փողոց կստանան ժամանակակից, հարմարավետ և բնակչության բոլոր խմբերի

համար մատչելի որակ, միաժամանակ պահպանելով իրենց պատմաճարտարապետական բնութագրերը: Բարեկարգ փողոցները և մայրերը մաս կլինեն քաղաքի պատմական կենտրոնի վերականգնման և վերակենդանացման ծրագրի:

Վերը նշված աշխատանքների համար մշակվելու է «Աշխատանքային նախագիծ» փուլի նախագծային փաստաթղթերի փաթեթ, ու հիման վրա կազմվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնատման հաշվետվությունը:

Նախատեսվող գործունեության իրականացումը տևելու է առավելագույնը 360 օր:

Աղյուսակ 2: Աշխատանքների ժամանակացույց

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ												
«Գյուղի քաղաքի զբոսաշրջության ենթակառուցվածքների և ճանապարհների վերակառուցում» ենթածրագրի նախատեսված շինարարական աշխատանքների												
Նախատեսվող գործունեության իրականացումը տևելու է առավելագույնը 12 ամիս:												
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	Ամիսներ											
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Աշխատանքների անվանումը												
Նախապատրաստական աշխատանքներ												
Լաբորատոր փորձարկման աշխատանքներ												
Հողային աշխատանքներ												
Ծածկի իրականացման աշխատանքներ												
Մայրերի իրականացման աշխատանքներ												
Ինժեներական կոմունիկացիաների վերատեղադրման և նորերի տեղադրման աշխատանքներ												
Հետիոտային անցումների կառուցման աշխատանքներ												
Անվտանգության էլեմենտների կառուցման աշխատանքներ												
Գործունեության կատարման շինարարության ժամանակաշրջանում օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ. ամբարձիչ, էքսկավատոր, կռուկ, բեռնատար և ինքնաթիռ մեքենաներ: Վերջիններս լինելու են կապալառու կազմակերպության մեքենաները: Մեքենաների կայանման վայրեր չեն նախատեսվում, քանի որ մեքենաներն աշխատելու են ըստ պահանջի և կայանվելու են գործունեության տարածքին կից՝ ճանապարհի եզրին:												

5. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐ

Դիտարկվող ծրագրի առաջարկը սահմանափակված է Համաշխարհային Բանկի պահանջներով և հատկացված ֆինանսավորմամբ: Նախագծային լուծումները իրականացվում են տեխնիկական առաջադրանքի համապատասխան, որտեղ հստակ նշված են գործողությունների հերթականությունը և իրականացվում է ճարտարապետահատակագծային առաջադրանքին համապատասխան: Նախագծային

այլ լուծումներ չեն նախատեսվում: Հետևաբար, որպես այլընտրանք կարող է դիտարկվել առանց ծրագրի կամ ծրագրից հրաժարվելու տարբերակը:

5.1. Առանց ծրագրի այլընտրանք

«Առանց ծրագրի» այլընտրանքը դիտարկում է իրավիճակը առանց ծրագրի իրականացման, այսինքն՝ առանց Գյումրի քաղաքի նշված տարածքների վերանորոգման և բարեկարգման:

Ընդհանուր առմամբ, «առանց ծրագրի» այլընտրանքը կիրառվում է առաջարկվող բարելավումների նկատմամբ: Այդ դեպքում «առանց ծրագրի» այլընտրանքը կհանգեցնի հետևյալ հետևանքներին.

- Գյումրու կենտրոնական ենթակառուցվածքային մասի վատթարացում, որը Գյումրի քաղաքի համար ենթակառուցվածքային կարևոր նշանակությունից բացի ներկայացնում է նաև պատմական արժեք;
- Ճանապարհային ենթակառուցվածքի շահագործման և սպասարկման ծախսերի ավելացում;
- Դժբախտ պատահարների ավելի մեծ ռիսկեր՝ ճանապարհային ծածկի վատթարացած վիճակի, անվտանգության տարրերի բացակայության և այլնի հետևանքով;
- Վերջին 2-3 տարիների ընթացքում զբոսաշրջության զգալի աճ արձանագրած տեմպերի նվազում, քաղաքը որպես տուրիստական ուղղություն զարգացման խոչընդոտում;
- Տրանսպորտային միջոցների սպասարկման ծախսերի ավելացում, ինչպես բեռնափոխադրողների այնպես էլ ուղևորների համար, ինչպես նաև հետագա հնարավոր տեղափոխման գների ավելացում;
- Միգրացիայի աճ քաղաքից:

Վերը նշված ցանկի հիման վրա կարելի է հաստատել, որ «առանց ծրագրի» այլընտրանքի հնարավոր անբարենպաստ բնապահպանական և սոցիալ տնտեսական ազդեցությունները մեծապես գերազանցում են Գյումրի քաղաքի նշված փողոցների և հատվածների վերանորոգման և բարելավման հետ կապված բնապահպանական և սոցիալական ռիսկերը:

5.2. Երթևեկության անվտանգության կազմակերպում

Փողոցների վերանորոգման ընթացքում երթևեկությունը կկարգավորվի ըստ երթևեկության կազմակերպման պլանի, որը ներկայացված է Հավելված 3-ում:

Երթևեկության կառավարման պլանը (ԵԿՊ) մի փաստաթուղթ է, որը վերլուծում է բոլոր հարակից տարրերն ու ռիսկերը, որոնք կարող են ազդել աշխատանքների վրա:

ԵԿՊ օգտագործվում է գոյություն ունեցող ճանապարհային ցանցի և դրա օգտագործողների կառավարումը նկարագրելու համար՝ առավելագույնի հասցնելու անվտանգությունը, արդյունավետությունը և հուսալիությունը:

ԵԿՊ-ի նպատակն է՝ օգտագործելով ժամանակակից անվտանգության նախագծման սկզբունքները և համապատասխան օրենսդրությանը համապատասխանելը, օպտիմալացնել ճանապարհների տարածքի բաշխումը, հնարավորինս ապահովելով երթևեկության և հետիոտների արդյունավետ հոսքը՝ միաժամանակ պաշտպանելով ճանապարհների խոցելի օգտվողներին:

Շինարարական աշխատանքների ընթացքում ճանապարհի կառավարումը բարդ աշխատանք է, որը ներառում է բազմաթիվ խնդիրներ. ուղևորների, ավտոբուսների, բեռնափոխադրումների և զբոսաշրջիկների շարժի կառավարում,

տրանսպորտի և տրանսպորտային միջոցների բոլոր տարբերակների միջոցների կառավարումը:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՑԵԱԳՐՈՒՄ Է.

Կայքի մուտք և ելք

Երթևեկության կառավարման նշաններ

Շինարարական երթևեկության / ճանապարհների փակման ուղղություն

Երթևեկության կառավարման արագության սահմանափակումներ.

5.2.1 Շինարարական աշխատանքների ցուցանիշները

- ❖ Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը՝ 360 օր
- ❖ Հողային աշխատանքներ. հանվող հողի և գրունտի ծավալները ըստ հատվածների ներկայացված են Աղյուսակ 3-ում՝

Աղյուսակ 3: Հողային աշխատանքներ. հանվող հողի և գրունտի ծավալները ըստ հատվածների

N	Անվանում	Ծավալ
1	(Խանջյան-530մ, Չայկովսկի-630մ, Հաղթանակի պողոտա 2x725մ	5500 խմ
2	Մբ. Ամենափրկիչ եկեղեցու այգի-1,2հա, Աբովյան փ. աջ-380մ, ձախ -230մ	1300 խմ
3	Աճեմյան փ-670մ, Հանեսողլյան փ – 350մ, Զիվանի փ -700մ, Նալբանդյան փ – 380մ, Տերյան փ – 780մ	7500 խմ

Սույն ծրագրի շրջանակներում Հոդի բերրի շերտի հանում և ժամանակավոր պահեստավորում չի նախատեսվում, քանի որ վերջինս բացակայում է ծրագրի իրականացման տարածքում (Շինարարական աշխատանքներն իրականացվելու են Գյումրի քաղաքի արդեն իսկ կառուցապատված հատվածներում):

Քանդման/փորման աշխատանքները ներառում են գոյություն ունեցող ասֆալտաբետոնյա ծածկույթի և սալաքարային ծածկի քանդում: Աշխատանքի ծավալները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 4. Նախատեսվող աշխատանքի ծավալները

N	Անվանում	Ծավալ
1	Խանջան-530մ., Չայկովսկի -630 մ, Հաղթանակի պողոտա 2x725մ	1600 խմ
2	Սբ. Ամենափրկիչ եկեղեցու այգի-1,2հա, Աբովյան փ. աջ-380մ, ձախ -230մ	450 խմ
3	Աճեմյան փ-670մ, Հանեսողյան փ – 350մ, Զիվանի փ -700մ, Նալբանդյան փ – 380մ, Տերյան փ – 780մ	3500 խմ

5.2.2 Շինարարությունում օգտագործվող հիմնական մեքենաներ և մեխանիզմների

Բոլոր հատվածների շինարարական աշխատանքներում օգտագործվելու են ընդհանուր թվով 43 մեքենա սարքավորումներ, որոնց անվանումներն ու քանակը ներկայացված է

Աղյուսակ 5. Մեքենասարքավորումների անվանացանկ և քանակ

N	Անվանում	Քանակ (հատ)
1	Էքսկավատոր	3
2	Բեռնատար մեքենա	8
3	Վերամբարձ կռունկ	3
4	Բուլդոզեր	3
5	Ավտոգրեյդեր	3
6	Ասֆալտփոխ	3

7	Գլդոն	9
8	Կոմպրեսատոր	3
9	Ավտոգոդրոնատոր	3
10	Ջրցան մեքենա	3
11	Ծածկի ֆրեզման մեքենա	2
	Ընդամենը	43

Շինարարական նյութերից օգտագործվելու են՝ ավազակուպիճ, ավազ, խիճ, բազալտե սալիկներ, ցեմենտ, ջուր, ասֆալտաբետոն, ջրատար և գազատար խողովակներ, մալուխներ, բիտում, քուկային ջրամեկուսացման նյութեր և այլն: Օգտագործվող հիմնական շինարարական նյութերի անվանումները և քանակները ներկայացված են Աղյուսակ.6-ում

Աղյուսակ 6. Հիմնական շինարարական նյութերի անվանումները և քանակները

N	Անվանում	Քանակ
1	Ավազակուպիճ	10500 խմ
2	Ավազ	1200 խմ
3	Խիճ	6200 խմ
4	Բազալտե սալիկներ	12500 քմ
5	Ցեմենտ	540 տոննա
6	Ջուր	800 000լ
7	Ասֆալտաբետոն	11000
8	Ջրատար և գազատար խողովակներ	3000 գծ.մ
9	Մալուխներ	25000մ
10	Բիտում	800 տ

11	Քսուկային ջրամեկուսացման նյութեր	400 քմ
12	Բետոնի շաղախ	750 խմ

Շինարարական աշխատանքների ընթացքում պատրաստի բետոնի շաղախի տեղափոխությունը շին. հրապարակ նախատեսվում է իրականացնել հատուկ բետոնի շաղախ տեղափոխող մեքենաներով, բացառելով շինարարական հրապարակում բետոնի շաղախի արտադրությունը:

Շինարարական կարիքների համար բետոնի շաղախի ձեռք բերումը պետք է իրականացվի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան բետոնի շաղախի արտադրության թույլտվություն ունեցող կազմակերպություններից:

Ապամոնտաժված և նախատեսվող ենթակառուցվածքներ. Ապամոնտաժվելու են բոլոր գոյություն էլեկտրական սյուները և հանձնվելու են կոմունիկացիաների սեփականատերերին, դրանց քանակը մոտավոր -350 հատ:

Ապամոնտաժվելու են նաև առկա գազի վերգետնյա խողովակագծերը, փողոցների առկա էլեկտրական մատակարարման վերգետնյա մալուխները, կապի գծերը, փողոցների վերանորոգվող հատվածների կոյուղու և անձրևաջրերի հեղեղատար խողովակագծերը և վերադարձվելու են կոմունիկացիաների սեփականատերերին:

Ապամոնտաժվող ենթակառուցվածքների բնութագիրը ներկայացված՝ ստորև՝

Փողոցների առկա էլեկտրական մատակարարման վերգետնյա մալուխները, կապի գծերը և հենասյուները ապամոնտաժվում են և վերադարձվում են համապատասխան սեփականատերերին:

- ❖ **Խանջյան և Չայկովսկու փողոցներ՝** էլ. մալուխ $ABB\Gamma_{\text{HT}} 5 \times 16 \text{մմ}^2$ - $600 + 560 = 1160 \text{գծ.մ}$
- ❖ **Հաղթանակի պողոտա՝** էլ. մալուխ $ABB\Gamma_{\text{HT}} 5 \times 16 \text{մմ}^2$ - 1600գծ.մ
- ❖ **Աբովյան փողոց և եկեղեցու հարակից այգու տարածք՝** էլ. Մալուխ $ABB\Gamma_{\text{HT}} 5 \times 16 \text{մմ}^2$ - 3600գծ.մ
- ❖ **Հանեսողյան, Աճեմյան և Զիվանի փողոցներ՝** էլ. մալուխ $ABB\Gamma_{\text{HT}} 5 \times 16 \text{մմ}^2$ - $420 + 750 + 750 = 1920 \text{գծ.մ}$
- ❖ **Նալբանդյան և Տերյան փողոցներ՝** էլ. մալուխ $ABB\Gamma_{\text{HT}} 5 \times 16 \text{մմ}^2$ - $2300 = 1920 \text{գծ.մ}$

Փողոցների առկա գազի վերգետնյա խողովակազծերը ապամոնտաժվում են և վերադարձվում են սեփականատիրոջը: վերատեղադրվում են ստորգետնյա համապատասխան Օ-ով:

- ❖ **Խանջյան փողոց՝** Ø159մմ/30գծ.մ; Ø273մմ/15գծ.մ
- ❖ **Աբովյան փողոց՝** Ø57մմ/420գծ.մ; Ø89մմ/10գծ.մ
- ❖ **Հանեսողյան փողոց՝** Ø57մմ/90գծ.մ; Ø273մմ/15գծ.մ
- ❖ **Աճեմյան փողոց՝** Ø108մմ/610գծ.մ; Ø57մմ/100գծ.մ
- ❖ **Զիվանի փողոց՝** Ø108մմ/600գծ.մ; Ø57մմ/100գծ.մ
- ❖ **Նալբանդյան և Տերյան փողոցներ՝** Ø1598մմ/790գծ.մ; Ø133մմ/780գծ.մ;

Փողոցների վերանորոգվող հատվածների կոյուղու և անձրևաջրերի հեղեղատար խողովակազծերը ապամոնտաժվում են և վերադարձվում են սեփականատիրոջը:

- ❖ **Խանջյան փողոց՝** Կոյուղի - PEHD SN8 OD 230/200-49գծ.մ .Հեղեղատար – PEHD SN8 OD 460/400-500գծ.մ
- ❖ **Հաղթանակի պողոտա՝** Կոյուղի - Մետաղ. Ø159մմ – 446գծ.մ; Ø279մմ – 114գծ.մ, Հեղեղատար – PEHD SN8 OD 695/600 - 1400գծ.մ
- ❖ **Աճեմյան փողոց՝** Զրազիծ - PE OD 63 PN10 - 134գծ.մ, Կոյուղի - PEHD SN8 OD 340/300-542գծ.մ
- ❖ **Զիվանի փողոց՝** Հեղեղատար – PEHD SN8 OD 695/600 - 167գծ.մ, – PEHD SN8 OD 460/400 - 477գծ.մ
- ❖ **Նալբանդյան և Տերյան փողոցներ՝** Կոյուղի - PEHD SN8 OD 340/300-336գծ.մ, PEHD SN8 OD 230/200-29գծ.մ, Հեղեղատար – PEHD SN8 OD 575/500 - 469գծ.մ, PEHD SN8 OD 460/400 – 179,5գծ.մ

Բոլոր ապամոնտաժված ենթակառուցվածքները փոխարինվելու են նույն տեխնիկական ցուցանիշներով նոր ենթակառուցվածքներով:

Էլեկտրամատակարարման, գազամատակարարման և կապի օդային/վերգետնյա գծերը, որտեղ հնարավոր է վերատեղադրել դրանք ստորգետնյա եղանակով դրանք վերատեղադրվելու են ստորգետնյա:

Աղյուսակ 7. Շինարարական աշխատանքներում ներգրավվող աշխատողների թիվը

N	Անվանում	Աշխատակիցների քանակ
1	Խանջյան-530մ,, Զայկովսկի -630 մ, Հաղթանակի պողոտա 2x725մ	60
2	Սբ. Ամենափրկիչ եկեղեցու այգի-1,2հա, Աբովյան փ. աջ-380մ, ձախ -230մ	50

3	Աճեմյան փ-670մ, Հանեսողյան փ – 350մ, Զիվանի փ -700մ, Նալբանդյան փ – 380մ, Տերյան փ – 780մ	85
4	ԻՏԱ	20
5	ԸՆԴԱՄԵՆԸ	215

6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ

6.1. Շրջակա միջավայրի վրա ակնկալվող ազդեցությունը

Նախագծման ընթացքում գնահատվել են շինարարական, ավարտական և շահագործման փուլերում հնարավոր ազդեցությունները:

Կատարվել է շինարարական աշխատանքների նախապատրաստման, շինհրապարակների կազմակերպման և բուն շինարարության ժամանակ հավանական ազդեցությունների գնահատում և առաջարկվել են համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

Նախապատրաստական աշխատանքները նախատեսում են շին. ճամբարների պլանավորումը, էլեկտրաէներգիայով, ջրով, սանհանգույցներով թափոնների կառավարման պլանի, շին. նյութերի պահեստավորման, հողի, ջրերի աղտոտման կանխարգելման միջոցառումների ապահովումը, արտակարգ իրավիճակների կառավարման պլանի առկայությունը, օրենքով սահմանված բոլոր անհրաժեշտ թույլտվությունների, հավաստագրերի ձեռքբերումը: Անվտանգության ինժեները պետք է գնահատի բոլոր հնարավոր ռիսկերը և սահմանի դրանց կառավարման պլանը, անվտանգության հրահանգները:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ հավանական ազդեցության մեծ մասը կլինի շինարարության փուլում: Ազդեցությունը կլինի ժամանակավոր և կարող է արդյունավետորեն կառավարվել նորացված մեղմացուցիչ միջոցների կիրառմամբ:

6.2. Շինարարական աշխատանքների ազդեցությունը

6.2.1 Բուսականության հեռացում

Շինարարական աշխատանքների ընթացքում բուսատեսակների և կենդանատեսակները վրա ազդեցություն չի նախատեսվում, քանի որ բոլոր աշխատանքները տեղի են ունենալու քաղաքային միջավայրում:

Սույն ծրագրի շրջանակներում գոյություն ունեցող ծառերի և թփերի հատումներ չի իրականացվելու:

6.2.2 Մշակութային ժառանգություն

Գյումրի քաղաքը գրանցված չէ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում, սակայն այդ ցանկում գրանցվելու դիմում է ներկայացվել 2012թ-ին, իսկ 2019թ-ին Գյումրին այս ցանկում գրանցելու քայլերը վերսկսվել են: Այս դիմումը հիմնավորվում է այն փաստով, որ Գյումրի քաղաքի կենտրոնը՝ «Կումայրի» արգելոց-թանգարանը բաղկացած է մոտ 1200 պատմական շինություններից:

«Կումայրի» արգելոց-թանգարանը ստեղծվեց ՀԽՍՀ Կառավարության 1980 թ. որոշմամբ, Գյումրիի պատմաճարտարապետական ինքնատիպ ժառանգության (մոտ 1200 շինություն) պահպանման նպատակով: 2017-ին մշակվեց և կյանքի կոչվեց «Կումայրի» պատմական կենտրոնի զարգացման ծրագիրը, սկսվեցին որոշ շենքերի վերանորոգման աշխատանքները:

Առաջարկվող ծրագրով նախատեսվում է Գյումրի քաղաքի կենտրոնական ճանապարհների և տարածքների վերականգնում և բարեկարգում, որը չի անդրադառնա պատմական նշանակություն ներկայացնող շենքերի և շինությունների վրա:

Եթե որևէ մշակութային ժառանգության կամ հնագիտական հետաքրքրություն ներկայացնող իր կամ վայր բացահայտվի շինարարական աշխատանքների ժամանակ՝ աշխատանքները պետք է դադարեցվեն և այդ մասին պետք է տեղեկացվի ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը:

6.2.3 Թոթոումներ

Շինարարական տեխնիկայի աշխատանքի արդյունքում հնարավոր է առաջանան նաև թոթոումներ, որը կարող է վնաս պատճառել մոտակա կառույցներին: Մինչ շինարարական աշխատանքների իրականացումն ու շինարարության ընթացքում, կկատարվի մոտակա կառույցների վիճակի գնահատում՝ դրանց հասցվելիք հավանական վնասը վերահսկելու նպատակով: Ծրագրի իրականացման ժամանակ որևէ կառույցի հասցված վնասը պետք է վերականգնվի կամ փոխհատուցվի: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի հուշարձաններին հասցվելիք վնասը կանխարգելելու վրա:

Շինարարության ընթացքում վերանորոգվող հատվածների մոտ բնակվող բնակչությունը կենթարկվի անբարենպաստ ազդեցությունների, որը ներառում է փոշու արտանետումներ, աղմուկ, թոթոումներ ճանապարհների անհասանելիություն, որոնք բոլորը կառաջացնեն գումարային բացասական ազդեցություններ: Սակայն դրանք լինելու են կարճաժամկետ, տեղի են ունենալու միայն շինարարական աշխատանքների ընթացքում և էականորեն մեղմացվելու են հատուկ միջոցառումների իրականացման շնորհիվ:

6.2.4 Օդային ավազան

Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնական արտանետումները առաջանում են հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի ու տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ, ասֆալտապատման արդյունքում:

Շինարարական աշխատանքների ազդեցությունը մթնոլորտային օդի վրա պայմանավորված է հողային աշխատանքների ընթացքում առաջացող փոշու և ասֆալտապատման ընթացքում առաջացող սահմանային ածխաջրածինների արտանետումներով:

Նշված ազդեցությունը գնահատելու համար ստորև ներկայացվում են շինարարական աշխատանքների հիմնական ցուցանիշները՝

- Վերանորոգվող ճանապարհների ընդհանուր երկարությունը՝ 6100 մ,
- Հողային աշխատանքների ընդհանուր ծավալը՝ 14300 մ³,
- Քանդման աշխատանքների ընդհանուր ծավալը՝ 5550 մ³,
- Ասֆալտապատման ընդհանուր մակերեսը՝ 34000 մ²,
- Ասֆալտապատման համար անհրաժեշտ բիտումի քանակը՝ 800տ
- Շինարարության տևողությունը՝ 360 օր, 8 ժամ/օր, 2880 ժամ:

Ընդամենը առանձնացված են աշխատանքների /շինհրապարակների/ 9 տեղամաս, որոնք դիտարկվում են որպես արտանետումների հարթակային աղբյուրներ:

Ելնելով վերը բերված ցուցանիշներից և յուրաքանչյուր տեղամասի մասնաբաժնից, կատարվել են արտանետումների հաշվարկներ:

Աղյուսակ 8. Ցուցանիշներն ըստ տեղամասերի

№	Տեղամասի անվանումը	Վերանորոգվող ճանապարհի երկարությունը, մ	Հողային աշխատանքների ծավալը, մ ³	Քանդման աշխատանքների ծավալը, մ ³	Ասֆալտապատվող մակերես, մ ²	Բիտումի քանակը, տ
1	Խանջյան փող.	530	1242	325	2954	70
2	Զայկովսկի փող.	630	1477	386	3511	82
3	Հաղթանակի պողոտա	1450	3400	889	8082	190
4	Մբ. Ամենափրկիչ եկեղեցու այգի և Աբովյան փող.	610	1430	450	3400	80
5	Աճեմյան փող.	670	1570	814	3734	88

№	Տեղամասի անվանումը	Վերանորոգվող ճանապարհի երկարությունը, մ	Հողային աշխատանքների ծավալը, մ³	Քանդման աշխատանքների ծավալը, մ³	Ասֆալտապատվող մակերես, մ²	Բխտումի քանակը, տ
6	Հանեսողյան փող.	350	820	425	1950	46
7	Զիվանի փող	700	1640	850	3900	92
8	Նալբանդյան փող.	380	891	461	2118	50
9	Տերյան փող.	780	1830	950	6301	102
	Ընդամենը	6100	14300	5550	34000	800

6.2.5 Արտանետումների հաշվարկ

Փոշու արտանետումներ

Փոշու արտանետումները առաջանում են փորման, բեռնման և քանդման աշխատանքների ընթացքում:

Փորման-բեռնման և քանդման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները առաջանում են հիմնականում հողային զանգվածների հանման, գոյություն ունեցող ծածկերի քանդման և ավտոինքնաթափ մեքենաների բեռնման ժամանակ:

Հանվող հողային զանգվածը կազմում է 14300 մ³ և քանդված զանգվածը՝ 5550 մ³, ընդամենը՝ 19850 մ³: Միջինացված տեսակարար կշիռը՝ 2.2 տ/մ³:

$$19850 \text{ մ}^3 \times 2.2 \text{ տ/մ}^3 = 43670 \text{ տ:}$$

$$\text{Ժամում՝ } 43670 \text{ տ} : 2880 \text{ ժամ} = 15.16 \text{ տ/ժամ:}$$

Հաշվարկները կատարված են ըստ «Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР 1984, Москва» մեթոդակարգի:

$$Q_1 = (P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times G \times 10^6 \times B \times P_6) / 3600 \text{ տ/ժամ (բանաձև 1), որտեղ}$$

P_1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է գրունտերում, 0.05

P_2 – 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P_3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու միջին արագությունը, 1.2

P_4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.6 (հաշվի առնելով բնական խոնավությունը և ջրցանի հանգամանքը)

P_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.4

P_6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը,
0.6

G – հանվող բեռնվող զանգվածի քանակը՝ 15.16 տ/ժամ:

$Q_1 = (0.05 \times 0.02 \times 1.2 \times 0.6 \times 0.4 \times 15.16 \times 10^6 \times 0.6 \times 1.0) / 3600 = 0.728$ գ/վրկ:

Շինարարության ամբողջ ընթացքում՝

$2880 \text{ ժամ} \times 3600 \text{ վրկ/ժամ} \times 0.728 \text{ գ/վրկ} : 10^6 \text{ գ/տ} = 7.54 \text{ տ:}$

Սահմանային ածխաջրածինների արտանետումներ

Ասֆալտապատման աշխատանքների համար օգտագործվող խառնուրդը պարունակում է հալեցրած բիտում, որը խառնուրդի փոման ընթացքում հանդիսանում է ածխաջրածինների առաջացման աղբյուր:

Ածխաջրածինների արտանետումների հաշվարկները կատարվել են ըստ «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագրի» (EMEP) արտանետումների հաշվառման ձեռնարկից (Guidebook 2013, SNAP 040611) [Gen-8]:

$E_{\text{pollutant}} = AP_{\text{production}} \times EF_{\text{pollutant}}$, որտեղ՝

$E_{\text{pollutant}}$ ՝ արտանետվող նյութի (ածխաջրածիններ) տարեկան քանակը, տ

$AP_{\text{production}}$ ՝ օգտագործվող ասֆալտային խառնուրդ քանակը,

Արտանետումները առաջանում են բիտումի տաք վիճակի փոման արդյունքում, որը կազմում է ասֆալտային խառնուրդի մոտավորապես 0.2 – 0.25 մասը, այստեղ ընդունվում է 0.2:

$EF_{\text{pollutant}}$ ՝ տվյալ նյութի (ածխաջրածիններ) արտանետումների տեսակարար գործակիցը, 16 գ/տ (table 3.1):

$E_{\text{pollutant}} = (800 \text{ տ} : 0.2) \times 16 \text{ գ/տ} = 64000 \text{ գ կամ } 0.064 \text{ տ:}$

Ասֆալտապատման աշխատանքները կատարվում են 3 ամսվա ընթացքում՝

$3 \text{ ամիս} \times 22 \text{ օր ամիս} \times 8 \text{ ժամ/օր} = 528 \text{ ժամ:}$

Այստեղից կարճաժամկետ արտանետումները (վարկյանում) կկազմեն.

$64000 \text{ գ} : 528 \text{ ժամ} : 3600 \text{ վրկ/ժամ} = 0.034 \text{ գ/վրկ:}$

Արտանետումների աղբյուրները և արտանետումների բաշխումը

Հաշվի առնելով աշխատանքների տեղամասերի մեծ տարածքները և ժամանակային տեսակետից անկանոն գրաֆիկը, յուրաքանչյուր տեղամասի համար պայմանականորեն ընդունվել է մեկ հարթակային աղբյուր՝ շինհրապարակի մակերեսով:

Արտանետումների բաշխումը այդ տեղամասերի միջև կատարվել է ըստ յուրաքանչյուր տեղամասի ճանապարհի երկարության և ասֆալտապատման մակերեսի համամասնության, ինչպես դա ներկայացված է թիվ 9 աղյուսակում:

Քանի որ շինհրապարակների հիմնական ցուցանիշները նույնանման են, դրանք ներկայացված են մեկ աղյուսակով, իսկ դրանց կոորդինատները և արտանետումների քանակները տրված են առանձին աղյուսակներով:

Աղյուսակ 9. Արտանետման աղբյուրների հիմնական ցուցանիշները

Արտանետման աղբյուրի անվանումը	Աղբյուրի տրամագիծը, մ	Արտանետման հոսքի արագությունը, մ/վրկ	Աղբյուրի բարձրությունը, մ	Հոսքի ջերմաստիճանը, °C	Աշխատաժամերը	Աղբյուրի համարը
Շինարարական հրապարակ	30.0	2.0	2.0	18.0	2880	1 - 9

Աղյուսակ 10-ում և 11-ում ներկայացված են 9 տեղամասերի աղբյուրների առանձին ցուցանիշները և արտանետումների քանակները:

Աղյուսակ 10-ում ներկայացված են 7 տեղամասեր, աղյուսակ 11-ում՝ մնացած երկուսը: Խմբավորումը կատարվել է ըստ տեղադիրքերի:

Աղյուսակ 10. Արտանետման աղբյուրները և դրանց հիմնական ցուցանիշները (մաս 1)

Աղբյուրի համարը	Կոորդինատները քարտեզ-սխեմայում, մ				Արտանետման աղբյուրի անվանումը	Աղբյուրի տրամագիծը, մ	Արտանետման հոսքի արագությունը, մ/վրկ	Աղբյուրի բարձրությունը, մ	Հոսքի ջերմաստիճանը, °C	Արտանետվող նյութի անվանումը	Արտանետումները	
	կետային աղբյուրի կենտրոնի կամ գծային աղբ. 1-ին ծայրի		գծային աղբյուրի 2-րդ ծայրի								գ/վրկ	տ/տարի
	X ₁	Y ₁	X ₂	Y ₂								
1	1350	1500	1380	1530	Նալբանդյան փողոց	30.0	2.0	2.0	18.0	- Անօրգանական փոշի - Սահմանային ածխաջրածիններ	0.045 0.0021	0.47 0.004
2	1605	1385	1635	1415	Հանեսօղյան փողոց	30.0	2.0	2.0	18.0	- Անօրգանական փոշի - Սահմանային ածխաջրածիններ	0.042 0.002	0.433 0.0037
3	1760	1480	1790	1510	Զիվանի փողոց	30.0	2.0	2.0	18.0	- Անօրգանական փոշի - Սահմանային ածխաջրածիններ	0.084 0.004	0.865 0.0073
4	1670	1320	1700	1350	Աճեմյան փողոց	30.0	2.0	2.0	18.0	- Անօրգանական փոշի - Սահմանային ածխաջրածիններ	0.08 0.0037	0.828 0.007
5	2100	1400	2130	1430	Ամենա-փրկիչ եկեղեցի, Աբովյան փողոց	30.0	2.0	2.0	18.0	Անօրգանական փոշի Սահմանային ածխաջրածիններ	0.073 0.0034	0.754 0.0064
6	2130	1180	2160	1210	Տեքյան փողոց	30.0	2.0	2.0	18.0	Անօրգանական փոշի Սահմանային ածխաջրածիններ	0.093 0.0043	0.965 0.0084

7	2570	1685	2600	1715	Հաղթանակի պողոտա	30.0	2.0	2.0	18.0	Անօրգանական փոշի Սահմանային ածխաջրածիններ	0.173 0.008	1.792 0.015
---	------	------	------	------	---------------------	------	-----	-----	------	--	----------------	----------------

Աղյուսակ 11. Արտանետման աղբյուրները և դրանց հիմնական ցուցանիշները (մաս 2)

Աղ- բյուրի հա- մարը	Կոորդինատները քարտեզ- սխեմայում, մ				Արտանետման աղբյուրի անվանումը	Աղբյուրի տրամա- զիծը, մ	Արտանետ- ման հոսքի արագությո- ւնը, մ/վրկ	Աղբյուրի բարձրու- թյունը, մ	Հոսքի ջերմաս- տիճանը, °C	Արտանետվող նյութի անվանումը	Արտանետումները	
	կետային աղբյուրի, կենտրոնի կամ գծային աղբ. 1-ին ծայրի		գծային աղբյուրի 2- րդ ծայրի								գ/վրկ	տ/տարի
	X ₁	Y ₁	X ₂	Y ₂								
1	1965	1340	1995	1370	Չայկովսկի փողոց	30.0	2.0	2.0	18.0	- Անօրգանական փոշի - Սահմանային ածխաջրածիններ	0.075 0.0035	0.778 0.0066
2	2370	1560	2400	1590	Խանջյան	30.0	2.0	2.0	18.0	- Անօրգանական փոշի - Սահմանային ածխաջրածիններ	0.063 0.003	0.655 0.0056

Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ

Արտանետումների ազդեցությունը գնահատելու նպատակով կատարվել են մթնոլորտում դրանց ցրման հաշվարկ և արդյունքները համեմատվել են սանիտարական նորմերի հետ:

Մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման հաշվարկները կատարվել են համակարգչի վրա, «Էոս» համակարգչային ծրագրով, վերը բերված աղյուսակների տվյալների հիման վրա:

Ըստ այդ հաշվարկների աղտոտվածության առավելագույն մակարդակը բոլոր նյութերի համար գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում:

Առավելագույն կոնցենտրացիաները ՍԹԿ մասով և մգ/մ³ ցուցանիշներով առաջին և երկրորդ խմբային աղբյուրների համար բերված են աղյուսակ 12-ում

Աղյուսակ 12. Գետնամերձ կոնցենտրացիաները

№	Արտանետման աղբյուրների համարները	Գետնամերձ կոնցենտրացիա			
		Անօրգանական փոշի		Սահմանային ածխաջրածիններ	
		ՍԹԿ մասով	մգ/մ ³	ՍԹԿ մասով	մգ/մ ³
1	1 – 7 շինարարական հրապարակներ	0.3498	0.1749	0.00579	0.00579
2	8 – 9 շինարարական հրապարակներ	0.3226	0.1613	0.001368	0.001368

Հավելվածների մասում բերված են համակարգչային հաշվարկների արդյունքները և գետնամերձ կոնցենտրացիաների գրաֆիկական պատկերները

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների շահագործում

Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում արտանետումները առաջանում են վառելիքի այրման արդյունքում: Հիմնականում օգտագործվում է դիզելային վառելիք:

Դիզ. վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից մշակված “Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման” մեթոդական հրահանգի³ հիման վրա:

Հաշվարկը իրականացվում է ըստ ծախսվող վառելիքի քանակի, տվյալ դեպքում դա հիմնականում դիզելային վառելիք է:

Ըստ նշված մեթոդակարգի, ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 13-ում:

Աղյուսակ 13. Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO ₂	CH	ՑՕՍ	CO	N ₂ O	CO ₂ ⁴	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Շինարարության ընթացքում շահագործվելու են էքսկավատորներ, բեռնատար մեքենաներ, վերամբարձ կռունկներ, բուլդոզերներ, ավտոգրեյդերներ, ասֆալտփոխներ, գլդոններ, կոմպրեսատորներ, ավտոգողորոնատորներ, ջրցան մեքենաներ, ծածկի ֆրեզման մեքենաներ: Մարդատար մեքենաները սույն հաշվարկում հաշվի չեն առնվել:

Շինարարական աշխատանքների ամբողջ ընթացքը՝ 360 օր է:

Հաշվի առնելով վառելիքի ծախսի մասին ստույգ նախագծային տվյալների բացակայությունը, հաշվարկների համար օգտագործվել են օգտագործվող տեխնիկական միջոցների տեսակների համար տեղեկատու գրականության ցուցանիշները, ըստ որոնց դիզավառելիքի օրական ծախսը կկազմի՝ 880լ, շինարարության ամբողջ ընթացքում՝ 316800 լ, կամ 269.2 տ:

³Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը “Core Inventory of Emissions in Europe” (այսուհետ՝ CORINAIR)՝ “Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում” մեթոդոլոգիային համապատասխան

⁴ Ածխածնի երկօքսիդը, ըստ ՀՀ օրենսդրության, չի հանդիսանում վնասակար նյութ և ենթակա չէ նորմավորման, համապատասխանաբար հետագա հաշվարկներում հաշվի չի առնվել:

Արտանետումների հաշվարկները ըստ շահագործվող տեխնիկայի տեսակի բերված են աղյուսակ 14-ում: Աղյուսակում միավորվել են ազոտի օքսիդներ, ինչպես նաև սահմանային ածխաջրածինները:

Աղյուսակ 14. Արտանետումների հաշվարկի արդյունքները

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները, տ
CO (ածխածնի մոնօքսիդ)	36.4	9.8
CH (ածխաջրածիններ)	8.403	2.26
NO ₂ (ազոտի օքսիդներ, երկօքսիդի հաշվարկով)	42.422	11.42
ՊՄ (պինդ մասնիկներ)	4.3	1.16

Ծծմբային անհիդրիդ

Ծծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$$ESO_2 = 2 \Sigma ksb, \text{ որտեղ } ksb - \text{ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ}$$

ks-ը վառելիքի ծախսն է՝ 269.2 տ/շինժամ

b –ն վառելիքի ծախսն է՝ 269.2 տ/շինժամ

$$SO_2 = 2 \times 269.2 \times 0.002 = 1.08 \text{ տ:}$$

Աղյուսակ 15. Շին.աշխատանքների արտանետումները

N	Վնասակար նյութը	Արտանետումների քանակները շինարարության արդյունքում, տ
1	Անօրգանական փոշի	7.54
2	Ածխածնի մոնօքսիդ	9.8
3	Ածխաջրածիններ	2.324
4	Ազոտի օքսիդներ (հաշվարկված որպես ազոտի երկօքսիդ)	11.42
5	Պինդ մասնիկներ	1.16
6	Ծծմբի երկօքսիդ	1.08

6.2.6 Ջրօգտագործում և ջրահեռացում

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը օգտագործվում է տեղանքի ջրցանի, հողային զանգվածի խոնավացման, ինչպես նաև, շինարարական անձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար: Շինարարական աշխատանքներում ներգրավված աշխատողների խմելու և կենցաղային կարիքների համար նախատեսված անհրաժեշտ ջրաքանակի ապահովումը շինարարության ընթացքում նախատեսվում է իրականացնել խմելու ջուրը տարրաներով բերելու եղանակով, այդ նպատակով համապատասխան ջրօգտագործման թույլտվություն ունեցող կազմակերպություն հետ կկնքվի ջրամատակարարման պայմանագիր:

Ջրցանի համար նախատեսված ջուրը կլինի բերովի, այդ նպատակով համապատասխան ջրօգտագործման թույլտվություն ունեցող կազմակերպություն հետ կկնքվի ջրամատակարարման պայմանագիր:

ա) Հարթակների ջրցան

Փողոցների շինարարության ժամանակ ճանապարհի երկայնքով կառուցվելու են բազմաթիվ մեծ ու փոքր շինհրապարակներ: Դրանց միջին մակերեսը կազմելու է 800 մ²:

Ջրցանի չափաքանակը կազմում է 1.5լ/մ²:

Տաք եղանակի պայմաններում իրականացվում է ջրցան օրական երկու անգամ:

Օրական ջրցանի ջրապահանջը կկազմի՝

$$800 \text{ մ}^2 \times 2 \times 0.0015 \text{ մ}^3/\text{մ}^2 = 2.4 \text{ մ}^3/\text{օր}:$$

Տաք, առանց տեղումների օրերի միջին տարեկան թիվը ընդունվում է 144, ամբողջ շինարարության ընթացքում՝ 144 օր:

Մեկ հրապարակի ջրապահանջը՝ $144 \text{ օր} \times 2.4 \text{ մ}^3/\text{օր} = 345.6 \text{ մ}^3/\text{շին.}:$

Ընդամենը նախատեսվում և միաժամանակ շահագործել 5 հրապարակ, որոնց տեղադիրքը ներկայացված է հավելվածներում բերված հատակագծի վրա:

$$345.6 \text{ մ}^3 \times 5 = 1728.0 \text{ մ}^3/\text{շին.}:$$

բ) Հողային զանգվածի խոնավացում

Ընդամենը փորվելու և հանվելու է 19850.0 մ³ հողային զանգված: Խոնավացման նորմը⁵ ընդունվում է 8 լ/մ³:

$$19850 \text{մ}^3 \times 8 \text{ լ/մ}^3 : 1000 \text{ լ/մ}^3 = 158.8 \text{ մ}^3$$

գ) Խմելու կենցաղային

Ջրի հաշվարկային ծախսերը որոշվում են համաձայն ՇՆ 2.04.01-25 չափաքանակների:

Օրական, մեկ բանվորին - 25լիտր

Օրական, մեկ վարչական աշխատողին - 16լիտր

Շինարարական անձնակազմը բաղկացած է լինելու 215 հոգուց, այդ թվում՝ 20 ինժեներատեխնիկական աշխատող (ԻՏԱ):

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է՝
 $W_{\text{խ.տ.}} = (n1 \times N1 + n2 \times N2) \times T$, որտեղ

$n1$ – ԻՏԱ աշխատողների թվաքանակն է՝ 20 մարդ

$N1$ – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

$n2$ –բանվորների թվաքանակն է՝ 195 մարդ

$N2$ - բանվորների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T - աշխատանքային օրերի թիվն է՝ 360 օր

$$W_{\text{խ.տ.}} = (20 \times 0.016 + 195 \times 0.025) \times 360 = 1870.2 \text{մ}^3:$$

Ջրահեռացում

Տարածքների ջրցանի և հողային զանգվածների խոնավացման արդյունքում արտահոսք չի առաջանում:

Կեղտաջրեր առաջանում են միայն խմելու և կենցաղային ջրօգտագործման արդյունքում:

5 Санитарные правила для предприятий по добыче и обогащению рудных, нерудных и россыпных полезных ископаемых (утв. Главным государственным санитарным врачом СССР 28 июня 1985 г. N 3905-85)

Տնտեսական կենցաղային հոսքաշրջերի հաշվարկային քանակը կկազմի՝

$$W_{\text{կոյուղի}} = W_{\text{կենցաղ.}} \cdot x (1 - \text{Կ}), \text{ որտեղ՝}$$

Կ՝ կորուստները, ընդհանրացված 5 տոկոս /0.05/,

$$W_{\text{կոյուղի}} = 1870.2 \times (1 - 0.05) = 1776.69 \text{ մ}^3:$$

Աղյուսակ 16. Ջրօգտագործման և ջրահեռացման ընդհանուր հաշվարկային ցուցանիշները

Ջրօգտագործման կարիքները	Ջրօգտագործում, մ ³ /տարի	Կորուստներ, մ ³ /տարի	Ջրահեռացում, մ ³ /տարի
Հարթակների ջրցան	1728.0	1728.0	-
Հողային զանգվածների խոնավացում	158.8	158.8	-
Խմելու և կենցաղային	1870.2	93.51	1776.69
Ընդամենը	3757.0	1980.31	1776.69

6.2.7 Հողային ռեսուրսներ

Հանույթ

Փողոցների տեղանքի և շինարարական հրապարակների նախապատրաստման ընթացքում փորվում և հանվում է հող և գրունտ՝ (Հանվող հողային զանգվածը կազմում է 14300 մ³ և քանդված զանգվածը՝ 5550 մ³), ընդամենը՝ 19850 մ³, որը պետք է տեղափոխվի համապատասխան աղբավայր համաձայն ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համանքի ղեկավարի 22.02.2022 թ-ի 03/2572-2022 տեղեկանքի (տես Հավելված 1): Հարկ է նշել, որ շինարարական աղբի ծավալը համընկնում է հանույթի ծավալի հետ:

Բերրի հող

Ծրագիրը իրականացվում է քաղաքային տարածքում, վերանորոգման աշխատանքները իրականացվելու են ճանապարհների և տարածքների գոյություն ունեցող, նախկինում ասֆալտապատած և/կամ սալապատ մակերեսների ծրագծերի սահմաններում: Ուստի նախատեսվող շինարարության ենթակա տեղանքը զուրկ է բերրի հողի շերտից:

Թափոններ

Թափոնների առաջացման աղբյուրները կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝

- Հիմնական – շինարարություն,
- Օժանդակ - ավտոտրանսպորտային և շինարարական տեխնիկայի սպասարկում, մատակարարում, աշխատողների կենցաղային սպասարկում:

Շինարարական թափոններ /ծածակագիրը՝ 9120060101004/

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համանքի ղեկավարի 22.02.2022 թ-ի 03/2572-2022 տեղեկանքի համաձայն՝ (տես Հավելված 1) ծրագրով նախատեսված փողոցների հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար յուրաքանչյուր փողոցի շինարարության ընթացքում առաջացած շինարարական աղբը 19850 մ³ կտեղափոխվի տեղեկանքում նշված համապատասխան վայրը: Հարկ է նշել, որ շինարարական աղբի ծավալը համընկնում է հանույթի ծավալի հետ:

Գոյացած հանույթը կտեղափոխվի շինարարական աղբի լցակույտ:

Օժանդակ գործընթացների թափոններ

ա) Բանեցված շարժիչների յուղերի թափոններ՝ 0.7տ

Դասիչ՝ 5410020102033

Բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ:

Բնութագիրը՝ հրդեհապայթյունավտանգ է, առաջացնում է հողի և ջրի աղտոտում:

Թափոնները առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շարժիչների շահագործման արդյունքում: Յուղերը հաշվարկված են որոշակի ժամանակամիջոցի համար, որից հետո կորցնելով իրենց անհրաժեշտ հատկությունները փոխարինվում են նոր քանակներով:

Օգտագործված յուղերը կուտակում են մետաղյա տարողություններում, այնուհետև վաճառվում օգտագործված յուղերի վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված ընկերություններին:

բ) Բանեցված դողածածկաններ՝ 0.6 տ:

Դասիչ՝ 5750020213004

Բաղադրությունը՝ ռետին-95%, մետաղյա լարեր (կորդ) -5%:

Բնութագիրը՝ հրդեհավտանգ է:

Թափոնները առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում: Դողածածկանները պարբերաբար փոխարինվում են նորերով:

Թափոնները հավաքվում և պահպանվում են իրենց համար նախատեսված տարածքներում՝ հետագայում այն վերամշակող լիցենզավորված ընկերություններին վաճառելու նպատակով:

զ) Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան՝ 0.3 տ/տարի:

Դասիչ՝ 92110100 13 012

Բաղադրությունը՝ կապար պարունակող ցանցեր, կապարի օքսիդներ և ծծմբական թթու պարունակող լուծույթներ, պլաստիկ կաղապարներ:

Բնութագիրը՝ հրդեհապայթյունավտանգ չէ, թունոնակ է, թունավոր շրջակա միջավայրի և մարդկանց առողջության համար, ծծմբական թթուն առաջացնում մաշկի այրվածքներ:

Թափոնները առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում: Կապարե կուտակիչները պարբերաբար փոխարինվում են նորերով:

Օգտագործված կապարե կուտակիչները հավաքվում են ավտոտնտեսության առանձին սենյակում, այնուհետև վաճառվում կուտակիչների թափոնի առևտրով զբաղվող լիցենզավորված կազմակերպություններին:

դ) Չտեսակավորված պողպատ պարունակող թափոններ (այդ թվում պողպատի փոշի)՝ 0.5 տ/տարի:

Դասիչ՝ 3512011101004

Բաղադրությունը՝ երկաթ, ածխածին

Թափոնը թունոնակ չէ

Այս թափոնը առաջանում է հանքային տեխնիկայի և ավտոտրանսպորտի շահագործման ընթացքում: Թափոնների կուտակվում են հատուկ տեղամասում, ծածկի տակ և վաճառվում են համապատասխան լիցենզիա ունեցող ընկերություններին:

Արտադրական թափոնների վերամշակման լիցենզավորված կազմակերպությունների թվում են,՝ “Մետեքսիմ” ՍՊԸ, “ԱՄ ՄԿ” ՍՊԸ, “Գ.Նազարյան և ընկ” ՍՊԸ, “Էկոլոգիա Վ.Կ.Հ.” ՍՊԸ և այլն:

ե) Կենցաղային աղբ (ծածակագիրը՝ 9120040001004)

Կենցաղային աղբը 150 տոննա ընդհանուր քանակությամբ կառաջանա բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների կենցաղային սպասարկման, ինչպես նաև վարչական գործունեության արդյունքում :

Թափոնը կուտակվում է աղբամաններում և ըստ համապատասխան պայմանագի տեղափոխվում է են Գյումրի համայնքների կողմից հատկացված աղբավայր:

Կենցաղային թափոնների հաշվարկային քանակը՝ 4.1 տ:

6.2.8 Աղմուկ

Մեքենասարքավորումների աշխատանքի և շինարարության հետ կապված այլ գործողությունների հետևանքով շինարարության ընթացքում կառաջանա աղմուկ: Տարբեր տեխնիկական միջոցներ ունեն աղմուկի տարբեր ցուցանիշներ, որոնք տատանվում են 65 մինչև 96 դԲա:

Աշխատանքները իրականացվելու են քաղաքի կենտրոնական մասում, որը բնակեցված է բնակելի և հասարակական շինություններով: Աղմուկի ազդեցությունը առավել զգալի կլինի վերականգնվող փողոցների անմիջապես հարևանությամբ բնակվող կամ այլ կառույցներում աշխատող մարդկանց համար, այն նվազագույնի հասցնելու նպատակով կիրականացվեն համապատասխան մեղմացող, նվազեցնող և կանխարգելիչ միջոցառումներ (Աղմուկի մակարդակի ուսումնասիրման նպատակով, մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կիրականացվի աղմուկի չափման աշխատանքներ, որի արդյունքները կընդունվեն, որպես ելակետային (Ֆոնային) հետագա աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև այդ ազդեցության մեղմացման նպատակով շինարարական աշխատանքները կիրականացվի օրվա ցերեկային ժամերին), այդ թվում ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի թիվ 79-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

6.2.9 Սոցիալական ազդեցություն

Ենթակառուցվածքների և ճանապարհի վերակառուցման շինարարական աշխատանքների ժամանակ առաջանում են փոշու և դիզելային վառելիքի այրման արգասիքներ, որոնց վտանգ են ներկայացնում բնակչության առողջության համար: Այդ ընթացքում աղմուկի մակարդակի ավելացումը նույնպես բացասաբար կարող է անդրադառնալ բնակչության առողջության համար:

Եթե եկության ինտենսիվացումը անհարմարություններ է ստեղծելու ինչպես վերակառուցվող փողոցների մոտակայքում բնակվող բնակչության, այնպես էլ գոյություն ունեցող ճանապարհով երթևեկության համար:

Շինարարական տեխնիկան, շինարարական հրապարակները և ճանապարհի հիմքերը կփոխեն տեսապատկերները:

Միևնույն ժամանակ շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ անձնակազմի զգալի մասը կհավաքագրվի տեղի բնակչությունից, ինչը դրական ազդեցություն կունենա բնակչության կենսամակարդակի վրա:

Աշխատանքների ընթացքում կզարգանան տեղի ենթակառուցվածքները, կլուծվեն մի շարք սոցիալական խնդիրներ:

6.2.10 Գումարային ազդեցություն

Վերջին տարիների ընթացքում աստիճանաբար վերակառուցվում և վերանորոգվում են Գյումրի քաղաքի ենթակառուցվածքները, հատկապես քաղաքի կենտրոնական մասում գտնվող ենթակառուցվածքները: Սակայն նշված ժամանակահատվածում նման ծավալի այլ շինարարական աշխատանքներ տեղանքում չեն իրականացվելու և չեն նախատեսվում: Հետևաբար, այստեղ չի գոյանա այլ աշխատանքների պատճառով առաջացած գումարային ազդեցություն:

6.3. Ազդեցություններ շահագործման փուլում

4.3.1. Շրջական միջավայր

Օդի որակը. Վերանորոգվող փողոցների հատվածներում օդի աղտոտման մակարդակի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ աղտոտիչների փաստացի քանակությունները մի քանի անգամ ցածր են ՍԹԿ-ներից: Երթևեկության ավելացման հետևանքով հնարավոր է ավելանան նաև արտանետումները, սակայն այս ազդեցությունները կլինեն աննշան և ժամանակավոր:

Աղմուկ: Փողոցների շահագործման ժամանակ ակնկալվում է աղմուկի ավելացում:

6.3.1 Սոցիալ-տնտեսական հետևանքներ

Երթևեկություն կինտենսիվանա, ինչը բացասաբար կազդի վերանորոգված փողոցների հարևանությամբ բնակվող բնակչության վրա:

Սակայն հարկ է նշել, որ ծրագիրը Գյումրի համայնքների համար կունենա մի շարք դրական սոցիալ-տնտեսական ազդեցություններ:

Կատեղծվեն բարեկարգ, ժամանակակից և Գյումրի քաղաքի ընդհանուր ոճին ներդաշնակ զբոսաշրջային ենթակառուցվածքներ՝ պատմական, մշակութային ռեսուրսները համապատասխան ձևով ներկայացնելու համար, կբարելավվեն քաղաքի համար կարևոր զբոսայգիները, քաղաքի պատմական կենտրոնի հանրային տարածքները, ճանապարհային ցանցը և ինժեներական ենթակառուցվածքը, կապահովվի քաղաքային տրանսպորտի և զբոսաշրջային երթուղիների անխափան աշխատանքը և տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների և զբոսաշրջային օբյեկտների (հյուրատներ, ռեստորաններ և այլն) մատչելիությունը:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՄԻ ՀԱՇՎԱՐԿ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$\text{ՎՏ} = \text{ՀԱԳ} + \text{ԶԱԳ} + \text{ՕԱԳ}, \text{ որտեղ՝}$$

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ, ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն:

ԶԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

7.1. Մթնոլորտային օդ

Տնտեսական վնասը՝ դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է, արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Տնտեսական վնասը հաշվարկվել է համաձայն ՀՀ կառավարության 25.01.2005թ. N 91-Ն որոշմամբ հաստատված “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ”-ի:

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$U = \sum_{i=1}^n \Phi_i \cdot \sum_{j=1}^m \Psi_j \cdot \Phi_j, \text{ որտեղ}$$

U -ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամերով,

$\sum_{i=1}^n \Phi_i$ -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9-րդ աղյուսակի արտադրական տարածքների համար՝ 4, շարժական աղբյուրների համար՝ 5:

Տվյալ դեպքում շինարարական տեխնիկան աշխատում է տեղամասի հարթակի վրա և կարող է դասվել անշարժ աղբյուրների շարքին, իսկ տրանսպորտային միջոցները՝ շարժական:

Փց-ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն կարգի համաձայն

$\Phi g = 1000$ դրամ:

Վի -ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է:

Քi -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

Քi գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝

$\Phi i = q (3 \text{ ՏԱi} - 2 \text{ ՍԹԱi}), \text{ ՏԱi} > \text{ՍԹԱi} (2),$ որտեղ՝

ՍԹԱi -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով:

ՏԱi -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

Հաշվի առնելով, որ վնասակար նյութերի արտանետումները իրականացվելու են ճանապարհի երկայնքնով լինելու են կարճաժամկետ և հիմնականում շարժական աղբյուրներից, $\Phi i = \text{ՏԱi}$

$q = 1$ ՝ անշարժ աղբյուրների համար,

$q = 3$ ՝ շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Հաշվարկի ժամանակ առանձնացվել են շարժական և անշարժ աղբյուրները:

Գյումրիում իրականացվող ծրագրի հատվածների շինարարության արդյունքում տնտեսական վնասի հաշվարկը բերված է աղյուսակ 5.1-ում:

Աղյուսակ 17. Շինարարության արդյունքում տնտեսական վնասի հաշվարկ

Արտանետվող նյութերի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Վ	Շգ	Տնտեսական վնասը. ՀՀ դրամ
	Si	q	$\Phi i = Si \times q$			$U = \sum \Phi g \sum \Phi i$
Անօրգանական փոշի	7.54	1	7.54	10	4	301,600

Ածխաջրածիններ	0.064	1	0.064	3.16	4	80,896
Ածխածնի մոնօքսիդ (շարժական աղբյուր)	9.8	3	29.4	1	5	147,000
Ածխաջրածիններ (շարժական աղբյուր)	2.26	3	6.78	3.16	5	107,124
Ազոտի երկօքսիդ (շարժական աղբյուր)	11.42	3	34.26	12.5	5	214,1250
Պ.Մ. (շարժական աղբյուր)	1,16	3	3,48	41,5	5	72,2100
Ծծմբի անհիդրիդ (շարժական աղբյուր)	1,08	3	3,24	16,5	5	267,300
Ընդամենը						3,467,270

Սույն ծրագրի շինարարության արդյունքում հաշվարկված տնտեսական վնասը կկազմի՝ 3,467,270 դրամ:

7.2. Զրային ռեսուրսներ

Ճանապարհների վերակառուցման շինարարության արդյունքում աղտոտված արտահոսք չի առաջանում, անձրևաջրերի և ձնհալքի հոսքերը հեռացվելու են տարածքում առկա անձրևահորերի և սելավատարների միջոցով:

7.3. Հողային ռեսուրսներ

Փողոցների վերանորոգման արդյունքում հողի օգտագործման նշանակությունը չի փոխվում և տնտեսական վնաս չի հաշվարկվում:

7.4. Կենսաբազմազանություն

Աշխատանքների ընթացքում ծառեր չեն հատվելու, քանի որ աշխատանքները իրականացվելու են գոյություն ունեցող ծրագծի սահմաններում:

8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

8.1. Ընդհանուր դրույթներ

Նախորդ գլխում նկարագրված ազդեցությունները բացառելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մեղմումը ապահովելու համար նախատեսված է բնապահպանական և սոցիալական միջոցառումների ծրագիր:

Ծրագրի մշակման համար իրականացվել են հատուկ ուսումնասիրություններ և նախապատրաստական աշխատանքներ, որոնցից հիմնականներն են.

- (i) առկա ենթակառուցվածքների ուսումնասիրումը, պահպանումը կամ տեղափոխումը, ներառյալ ջրամատակարարման և կոյուղու համակարգերն ու հեռահաղորդակցման գծերը,
- (ii) շինարարական ճամբարների, ենթակառուցվածքների և գրասենյակների, նյութերի պահեստների և մեքենասարքավումների առավել նպատակահարմար տեղերի ընտրությունը,
- (iii) շինարարական ճամբարների ցանկապատումն ու դարպասների տեղադրումը,
- (iv) թափոնների կառավարման պլանի մշակումը,
- (v) փողոցների երկայնքով թափված աղբի համար տեղադրման վայրերի ճշտումը,
- (vi) շինարարությունից հետո շինարարական հրապարակների, ճամփեզրերի և միջնամասերի բարեկարգման իրականացումը և վերջիններիս տրամադրումը տեղական ինքնակառավարման մարմնին:
- (vii) շինարարության ընթացքում մթնոլորտային օդ փոշու արտանետումների հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով՝ տեխնիկական սարքավորումները և
- (viii) տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, բացառելով՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը,
- (ix) շինարարական նյութերի, կուտակումների ծածկում՝ օդային ավազան արտանետումները նվազեցնելու նպատակով,
- (x) շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարներից,

- (xi) քայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման դեպքում, դրանց հատուկ, փակ, անթափանց տարաներում պահում,
- (xii) շինհրապարակում ընդհանուր թափոններից հողի, շինարարական և կենցաղային աղբի տարանջատում, տեղափոխում հատուկ հատկացված աղբավայր,
- (xiii) շինարարական աշխատանքների ժամանակ շրջակա միջավայրը և գործունեության տարածքը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից և բացառվելու է տարածքից հեռացվող բուսականության բաց այրումը,
- (xiv) արտակարգ իրավիճակների դեպքում համապատասխան կլանիչներով տարածքի մաքրում, աշխատողների անվտանգության ապահովում և այլն:

Հաշվի առնելով շրջակա միջավայրի և կարևոր պատմական արժեք ներկայացնող տարածքների վրա վերը նշված բոլոր անբարենպաստ ազդեցությունների ժամանակավոր բնույթը և կառավարելի լինելը, Ծրագրի իրականացմամբ կստեղծվեն բարեկարգ, ժամանակակից և Գյումրի քաղաքի ընդհանուր ոճին ներդաշնակ զբոսաշրջային ենթակառուցվածքներ՝ պատմական, մշակութային ռեսուրսները համապատասխան ձևով ներկայացնելու համար, կբարելավեն քաղաքի համար կարևոր զբոսայգիները, քաղաքի պատմական կենտրոնի հանրային տարածքները, ճանապարհային ցանցը և ինժեներական ենթակառուցվածքը, կապահովեն քաղաքային տրանսպորտի և զբոսաշրջային երթուղիների անխափան աշխատանքը և տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների և զբոսաշրջային օբյեկտների (հյուրատներ, ռեստորաններ և այլն) մատչելիությունը: Այս ամենը, իր հերթին կնպաստի Հայաստանի Հանրապետության տնտեսական աճին:

Սույն ծրագրի շրջանակներում նախատեսվում է.

փողոցների վերակառուցում ներառելով՝ փողոցների երթևեկելի մասի ասֆալտի ծածկույթի փոխարինում, կահավորում, նշագծում, լուսատուների և երթևեկության նշանների տեղադրում;

մայթերի վերականգնում/փոխարինում;

անձրևային ջրերի հեռացման կանոնակարգում, գոյություն ունեցող համակարգերի վերանորոգում;

կոյուղագծի վերանորոգման/վերակառուցման մշակում;

արտաքին լուսավորության կարգավորում, որը կներառի ինչպես երթևեկելի մասի այնպես էլ մայթերի լուսավորությունը գիշերվա ժամերին;

գոյություն ունեցող էլեկտրամատակարարման, գազամատակարարման և կապի գծերի կանոնակարգում, չգործող գծերի/սյուների ապամոնտաժում;

տարածքի հարմարեցում բնակչության սակավաշարժ խմբերի համար, նախատեսելով թեքահարթակներ, թույլ տեսողություն ունեցող մարդկանց համար հատուկ սալահատակ;

«Բարեկամության» այգու գլխավոր մուտքին հարող մայթի վերանորոգում և այգու տարածքի բարեկարգում;

ՄԲ.Ամենափրկիչ եկեղեցուն կից այգու տարածքի վերանորոգում և չգործող շատրվանի վերակառուցում, ժամանակակից էներգախնայող լուսատուների տեղադրում, տարածքի հնարավորինս հարմարեցում հաշմանդամների համար, բարեկարգում, կանաչապատում, կահավորում՝ նստարանների, աղբամանների, զբոսաշրջային ցուցանակների տեղադրում:

Բոլոր դեպքերում, եթե շինարարակ անաշխատանքների ընթացքում մշակութային կամ հնագիտական ժառանգության որևէ միավոր է բացահայտվել, պետք է դադարեցնել աշխատանքները և տեղեկացնել ԿԳՄՄՆ: Շինարարական աշխատանքները չեն կարող վերսկսվել մինչև պատահական գյուտը չհետազոտվի հնագետի կողմից և ԿԳՄՄՆ -ի կողմից չտրվի գրավոր թույլտվություն: Կապալառուն պարտավոր է ծանոթ լինել ԿԳՄՄՆ -ի պատահական գյուտերի ընթացակարգին և պայմանագրով պետք է սահմանվի այդ ընթացակարգի խիստ հետևումը:

8.2. Բնապահպանական և սոցիալական միջոցառումներ և բնապահպանական կառավարման պլան

•ԲԿՊ նպատակն է կանխարգելել, մեղմացնել և նվազագույնի հասցնել շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվող անբարենպաստ ազդեցությունները, ինչպես նաև շահագործման և դրան հաջորդող սպասարկման ժամանակահատվածում ուղեցույց հանդիսանալ շրջակա միջավայրի պահպանության խնդիրների լուծման համար:

ԲԿՊ-ն կձառայի որպես հիմք հետևյալի համար.

- (i) Ծրագրի հնարավոր անբարենպաստ ազդեցությունների կառավարում, դրանց կանխարգելում կամ մեղմացում,
- (ii) Կապալառուի կողմից նախապատրաստել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը նախքան նախաշինարարական և շինարարության հետ կապված գործողությունների մեկնարկը՝ բնապահպանական օրենքներին, կանոնակարգերին և ստանդարտներին համապատասխանությունը ստուգելու համար
- (iii) Ծրագրի մոնիթորինգի իրականացում:

- ԲԿՊ-ն ամփոփում է շրջակա միջավայրի վրա կանխատեսվող անբարենպաստ ազդեցությունները: Յուրաքանչյուր բացահայտված ազդեցության համար առաջարկվել է համապատասխան մեղմացնող միջոցառում: Բնապահպանական մոնիթորինգի գործողությունները, դրանց իրականացման համար պատասխանատու մարմինները և իրականացման գնահատված ծախսերը նույնպես ընդգրկված են:
 - (i) Կապալառուի կողմից՝ շինարարության պայմանագրի առանձնահատկությունների հիման վրա կթարմացվի ԲԿՊ-ը՝ հարմարեցվելով փոփոխվող պայմաններին: Այն կներկայացվի Խորհրդատուի դիտարկմանը:
 - (ii) Համաձայն շինարարական աշխատանքների պայմանագրերի համար առաջարկվող բնապահպանական անվտանգության կետերի՝ Կապալառուն պետք է մոբիլիզացման ժամանակահատվածում նախաձեռնի հետևյալ հետազոտություններն ու գործողությունները.
 - վարձի լրիվ դրույքով բնապահպանության, սոցիալական առողջության և անվտանգության մասնագետ (ԲՄԱՄ),
 - կազմակերպի բնապահպանական, սոցիալական և անվտանգության ուսուցում և կողմնորոշում աշխատողների համար,
 - իրականացնի փողոցների և տարածքների նախնական վիճակի հետազոտություն,
 - նախաձեռնի միջոցառումներ՝ պահպանելու համար գոյություն ունեցող վերականգնվող հատվածներում առկա ծառերը և թփերը,
 - ջրագծերի, կոյուղագծերի, էլեկտրականության լարերի և այլ հաղորդողիների պահպանություն և/կամ տեղափոխում, այն դեպքերում երբ դրանք չեն փոխարինվելու ծրագրի շրջանակում,
 - ջրի որակի, օդի որակի (փոշի), աղմուկի և թրթռման ելակետային տվյալների հավաքագրման համար հետազոտություններ շինարարական աշխատանքային տեղամասում:
- Աշխատանքներն ավարտելիս կիրականացնի շինհրապարակի ողջ

օգտագործված տարածքներն իրենց նախկին վիճակին վերականգնելու (ընդունելի ձևով) համար պահանջվող բոլոր անհրաժեշտ գործողությունները: ԲԿՊ-ով սահմանված դրույթները կիրականացվեն Կապալառուի կողմից և մոնիթորինգի կենթարկվեն Խորհրդատուի կողմից:

- ԲԿՊ-ն ներկայացնում է հիմնական սկզբունքները և ընդհանուր մեղմացնող միջոցառումները և ներառում է հետևյալ ենթապլանները.

Աշխատանքային հիգիենայի և անվտանգության պլան

Այս պլանի հիմնական նպատակն է փաստաթղթավորել Կապալառուին ուղղված բոլոր պահանջները՝ ապահովելու համար բնապահպանական և մասնագիտական անվտանգությունն ու առողջապահությունը Ծրագրի իրականացման ընթացքում՝ ՀԲ-ի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Կապալառուն կվարձի առողջության և անվտանգության մասնագետ, կամ բնապահպանության մասնագետ, որի պարտականությունները կներառեն ԲԿՊ-ում մանրամասն ներկայացված թեմաների վերաբերյալ կողմնորոշման պլանի մշակումը և իրականացումը:

Կապալառուն պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ աշխատանքային տեղամասում գտնվող բոլոր անձանց առողջությունը ու անվտանգությունն ապահովելու համար: Կապալառուն պետք է հետևի/ստուգի, որ աշխատանքներն իրականանան անվտանգ և արդյունավետ կերպով:

Աշխատանքների հիգիենայի և անվտանգության ենթապլանի իրականացման համար կպահանջվի բնապահպանական, սոցիալական, մասնագիտական առողջության և անվտանգության կողմնորոշում՝ շինարարական աշխատանքներում ներգրավված ողջ անձնակազմի համար: Աշխատակազմի անդամները բոլոր մակարդակներում ունեն պատասխանատվության որոշակի աստիճան՝ բնապահպանական, սոցիալական և մասնագիտական առողջության և անվտանգության հարցերի վերաբերյալ: Որպես այդպիսին՝ շինարարության աշխատուժի իրազեկվածությունն ընդլայնելու և հմտությունները զարգացնելու նպատակով ողջ անձնակազմին բնապահպանական հարցերի և ԲԿՊ-ի իրականացման առնչությամբ կողմնորոշում ապահովելը խիստ կարևոր է ԲԿՊ-ի արդյունավետությունն ապահովելու համար:

Պահանջներ աշխատողի անձնական պաշտպանիչ միջոցների համար՝ ներառյալ շինարարական սաղավարտներ, անվտանգության կոշիկներ, բարձր-տեսանելիության բաճկոններ, ձեռնոցներ, ակնոցներ, պաշտպանիչ ականջակալները և դիմակներ կամ դրան համարժեք որևէ իր՝ ըստ պահանջի:

Այս պլանի նպատակն է փաստաթղթավորել Կապալառուի և նրա աշխատողների գործելակերպը շինարարական աշխատանքների ընթացքում քիմիական նյութերի տեղափոխման, դրանց պահեստավորման, օգտագործման, տեղավորման աշխատանքներում, վտանգավոր նյութերի պատահական արտահոսքի դեպքում համապատասխան միջոցներ կիրառելիս, ինչպես նաև ցանկացած այլ հնարավոր պատահարների դեպքում, որոնք կարող են տեղի ունենալ շինարարական աշխատանքների ընթացքում: Բնապահպանական կառավարման պլանում նախատեսված միջոցների կիրառումը թույլ կտա նվազեցնել ցանկացած ազդեցության ռիսկը՝ այն հասցնելով ընդունելի մակարդակի:

Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝ հրդեհների առաջացումը, հեղուկ նյութերի արտահոսքը, աշխատողների վնասվածքները և շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը պետք է իրականացնի շինարարական աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հակահրդեհային պարագաների տեղադրում:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու առաջին օգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների;

- Անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքը արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:
- իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Թափոնների և նյութերի կառավարման պլան

Այս պլանի նպատակն է փաստաթղթավորել Կապալառուի և նրա աշխատողների գործելակերպը շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած թափոնների կառավարման և տեղավորման աշխատանքներում:

Այս պլանում կիրառվող թափոնների կառավարման հիմնական մոտեցումը հիմնված է թափոնների կառավարման հետևյալ հիերարխիայի վրա (ամենաբարձր առաջնահերթությունից մինչև ամենացածրը).

- (i) խուսափել թափոնների առաջացումից և աղտոտվածությունից,
- (ii) նվազագույնի հասցնել թափոնների առաջացումը և աղտոտված հողի հետ կապված աշխատանքները,
- (iii) հնարավորինս իրականացնել թափոնների վերաօգտագործում,
- (iv) վերամշակել այնքան թափոն, որքան հնարավոր է,
- (v) թափոնները կուտակել բնապահպանական տեսանկյունից հարմար ձևով՝ այն տարածքներում, որոնք սահմանված են համապատասխան իրավասու մարմինների կողմից:

Նշված սկզբունքների համաձայն՝ թափոնների, փչացած նյութերի կառավարումը՝ համապատասխան տեղավորման, ըստ տեսակների տարանջատման, պահեստավորման, կուտակման և կրթական/ուսուցողական մեթոդների կիրառման հետ միասին, կապահովի թափոնների առաջացման և աղտոտված հողի հետ շփման ռիսկի ցածր մակարդակ:

Աշխատանքային տեղամասի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան

Այս պլանի նպատակն է փաստաթղթավորել Կապալառուի և նրա աշխատողների գործելակերպը շինհրապարակի մաքրման և վերականգնման, ներառյալ՝ կանաչապատման աշխատանքներում:

Հետշինարարական փուլ (շահագործում և սպասարկում).

- Թերությունների շտկման ժամանակահատվածի այն ընթացքում, երբ Կապալառուի կողմից շինհրապարակում իրականացվում են թերությունների վերացման աշխատանքներ, Կապալառուն պետք է գործի ՀՀ օրենսդրության և ՀԲ բնապահպանական անվտանգության երեշխիքների պահանջներին համապատասխան: Թերությունների շտկման ժամանակահատվածի և դրան հաջորդող շահագործման մնացած ողջ ժամանակահատվածում

բնապահպանական կատարման համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին պետք է ապահովվի:

Մոնիթորինգ

Մոնիթորինգը ԲԿՊ շրջանակներում ներառում է մոնիթորինգի ելակետային տվյալների հավաքագրումը և բնապահպանական կանոնավոր մոնիթորինգի պլանը:

Ջրի և օդի որակի վերաբերյալ ելակետային տվյալների հավաքագրումն իրականացվել է Խորհրդատուի կողմից՝ ՇՄԱԳ-ի նախապատրաստման ժամանակ, ինչը կիրականացվի կամ կհաստատվի նաև Կապալառուի կողմից աշխատանքների մեկնարկից առաջ: Մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը Կապալառուն պետք է իրականացնի աղմուկի և թրթռման գործիքային չափումներ, որը կհանդիսանա աղմուկի և թրթռման վերաբերյալ ելակետային (ֆոնային) տվյալները (աղմուկի և թրթռման գործիքային չափումները պետք է իրականացվի համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից):

Փոշու, աղմուկի թրթռման պլանը որպես Բնապահպանական կառավարման պլանի բաղադրիչ կմշակվի Կապալառուի կողմից՝ հստակ նշելով չափման կետերի տեղավայրը, չափումների ժամանակացույցը և յուրաքանչյուր չափվող կետի սահմանային արժեքները՝ համեմատական վերլուծության համար: Հետագա կանոնավոր մոնիթորինգի սահմանային արժեքները կսահմանվեն ելակետային տվյալների և հայաստանյան ստանդարտների հիման վրա: Ելակետային տվյալների հետազոտական ծախսերը կներառվեն Կապալառուի բյուջեում:

Բնապահպանական կանոնավոր մոնիթորինգի պլանը նախատեսում է գործողություններ, որոնք կուղղորդեն Կապալառուին՝ ստուգելու և/կամ համեմատելու մեղմացնող միջոցառումները Ծրագրի հետևանքով առաջացած անբարենպաստ ազդեցությունները կանխարգելելու և վերահսկելու համար: Այն օգտագործվում է նաև տարբեր պարամետրերի չափումների և համեմատական վերլուծության նպատակներով՝ պարզելու համար, թե արդյոք բնապահպանական չափանիշները և ցուցանիշները պահպանված կամ գերազանցված են, որպեսզի անհապաղ գործողություններ ձեռնարկվեն: Բնապահպանական մոնիթորինգը կարող է նաև ցույց տալ և որոշել Ծրագրի անցանկալի ազդեցությունների վերահսկման նպատակով իրականացվող մեղմացնող միջոցառումների արդյունավետությունը: Բնապահպանական մոնիթորինգի արդյունքները կփաստաթղթավորվեն՝ անբարենպաստ ազդեցությունների հետևանքներն արձանագրելու և իրատեսական ամենավաղ ժամկետում շտկող միջոցառումներ իրականացնելու նպատակով: Բնապահպանական կատարման ցուցանիշների հետ մոնիթորինգի արդյունքների անհամապատասխանությունը նույնպես կարձանագրվի:

Մոնիթորինգը պետք է իրականացվի Ծրագրի տարբեր մակարդակներում ներգրավված բնապահպանության մասնագետների կողմից՝ մոնիթորինգի իրականացման նպատակով տեղամասային այցելությունների միջոցով: Տեղամասային այցելությունները պետք է իրականացվեն համաձայն մոնիթորինգի պաշտոնական ժամանակացույցի՝ Կապալառու՝ շաբաթական, Ինժեներ՝ ամսական: Բնապահպանական մոնիթորինգի առաջադրանքների մանրամասները նկարագրված են ԲԿՊ-ում:

Իրականացման կազմակերպումը

- Իրականացման ժամանակացույցը և իրականացման համար պատասխանատու մարմինները ներկայացված են ԲԿՊ-ում:
- Բնապահպանական անձնակազմի համալրում
- Բնապահպանության մասնագետները կներգրավվեն Ինժեների և Կապալառուի մակարդակներում: ՀԲ անվտանգության քաղաքականության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության հետ Ծրագրի գործողությունների համապատասխանությունն ապահովելու նպատակով կարողությունների զարգացումը, ինչպես նաև բնապահպանության ստորաբաժանումների և մասնագետների առաջադրանքներն ու պարտականությունները նույնպես նկարագրված են ԲԿՊ-ում:
- Մոնիթորինգի վերաբերյալ պարտավորությունները, դերերը, առաջադրանքները և գործողությունների հաճախականությունը

ԲԿՊ-ի իրականացմանը, վերահսկողությանը և մոնիթորինգին առնչվող պարտավորությունները, դերակատարությունները, առաջադրանքները և գործողությունների հաճախականությունները բաշխված են հետևյալ կերպով.

- Կապալառուի բնապահպանության մասնագետը՝ առողջապահության և անվտանգության ոլորտի կրթությամբ, ունի հետևյալ պարտականությունները, դերերը և առաջադրանքները՝
- Կապալառուի վերահսկողության թիմը և բնապահպանության մասնագետը իրականացնում են բնապահպանական մեղմացնող միջոցառումները և դրանց առնչվող մոնիթորինգի գործողությունները օրական կտրվածքով:
- Բնապահպանության մասնագետը վերահսկում է ելակետային տվյալների հետազոտությունները՝ համաձայն Տեխնիկական մասնագրերի և Բնապահպանական կառավարման պլանի:
- Բնապահպանության մասնագետը շաբաթական կտրվածքով իրականացնում է տեղամասային այցելություններ և ստուգումներ:

- Բնապահպանության մասնագետը փաստաթղթավորում է մոնիթորինգի գործողությունները և արդյունքները ներառում շաբաթական բնապահպանական հաշվետվության մեջ:
- Եթե մոնիթորինգի արդյունքները չեն բավարարում սահմանված պահանջներին, բնապահպանության մասնագետը հնարավորինս շուտ սահմանում է անհրաժեշտ շտկող գործողություններ՝ Շտկող միջոցառումների պլանի միջոցով:
- Պատահարների դեպքերում (հրդեհ, պայթյուն, վառելիքի արտահոսք, բիտումի արտահոսք և այլն) Կապալառուն պարտավոր է անհապաղ տեղեկացնել Ինժեներին: Նախնական ծանուցումը կարող է լինել բանավոր, սակայն տեղի ունեցած պատահարից կամ միջադեպից հետո՝ 24 ժամվա ընթացքում պետք է հաջորդի գրավոր զեկույցը:
- Բնապահպանության մասնագետը պետք է պատրաստի Առաջընթացի վերաբերյալ ամսական հաշվետվություն՝ որպես Կապալառուի աշխատանքների առաջընթացի ամսական հաշվետվության մի մաս:
- Բնապահպանության մասնագետը թերությունների շտկման ժամանակահատվածում պետք է կատարի այցելություններ տեղամաս և ներկայացնի տեղամասի կարգավիճակի մասին հաշվետվություն:
- Կապալառուն պատասխանատու կլինի Ծրագրի գործողությունների և բնապահպանական իրադեկման վերաբերյալ ընդհանուր կողմնորոշիչ դասընթացներ կազմակերպելու համար: Այս դասընթացները կկենտրոնանան աշխատանքային տեղամասում աշխատող բոլոր մարդկանց/աշխատողների պարտականությունների վրա՝ առնչվելով շրջակա միջավայրի պահպանությանը և շինարարության փուլում սոցիալական խնդիրների վերաբերյալ անվտանգ մոտեցում ցուցաբերելուն՝ համաձայն ՀՀ բնապահպանական օրենսդրությանը, ՇՄԱԳ-ի և ԲԿՊ-ի:
- Ուսումնական գործընթացի անհրաժեշտության գնահատումը կիրականացվի ԲԿՊ-ն դաշտային մակարդակում պատշաճ ներկայացնելու համար: Դասընթացները կներառեն, սակայն սահմանափակված չեն լինի հետևյալով՝ թափոնները հասցնել նվազագույնի, թափոնների պատշաճ կառավարում, աշխատանքի ընթացքում աշխատողների անվտանգության ապահովման միջոցառումներ, արտակարգ իրավիճակների կամ միջադեպերի ժամանակ պատրաստվածություն և այլն: Հատուկ ուսուցում կանցկացվի նաև բեռնատարների և այլ մեքենաների վարորդների համար:

Բացասական ազդեցություններ և մեղմացնող միջոցառումներ շինարարության փուլում

Ազդեցությունը բուսական աշխարհի վրա

- Շինարարական աշխատանքների ընթացքում ծառահատումներ չի նախատեսվում քանի որ աշխատանքները իրականացվելու են քաղաքի փողոցների գոյություն ունեցող սահմաններում: Սակայն, աշխատողների համար կկազմակերպվեն շրջակա միջավայրի պահպանության և շինարարական աշխատանքների ընթացքում ծառերի հատումից խուսափելու վերաբերյալ դասընթացներ:

Ազդեցություն ջրային ռեսուրսների վրա

- Ջրի աղտոտումը հնարավոր է շինարարական աշխատանքների ընթացքում, եթե գոյություն ունեցող ջրային ցանցերի, խմելու և ոռոգման ջրանցքների և ջրագծերի մեջ նավթայուղերի արտահոսք լինի կամ տեղափոխելիս թափվի հանույթի նյութը: Մակերևութային ջրերի մեջ նավթի և վառելանյութերի ներթափանցումը կանխելու համար համապատասխան միջոցներ պետք է կիրառվեն. Նավթամթերքի պահեստները պետք է տեղադրվեն բետոնածածկ և եզրապաշտպան տարածքներում, ցանցեր և այլ պաշտպանիչ կառուցվածքներ պետք է տեղադրվեն շինարարական բոլոր հատուկ տարածքներում՝ ջրի և խոնավության ներթափանցումը կանխելու համար:
- Շինարարության ժամանակ ջուրը օգտագործվելու է աշխատանքների հրապարակների ջրցանի, հողային զանգվածների խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար: Ջրապահանջի ծավալների հաշվարկները, ըստ նպատակային օգտագործման ներկայացված են: Կենցաղային ջրօգտագործման հետևանքով առաջացած կեղտաջրերը ուղղվելու են կոյուղի՝ հնարավորության դեպքում շինարարական ճամբարում մոտակա ընդհանուր կոյուղու համակարգին միացումով:

Ազդեցություն հողի վրա՝ էրոզիա և հողի որակի փոփոխություն

Սույն ծրագրի շրջանակներում հողի վրա ազդեցությունները կլինեն նվազագույնը և պայմանավորված կլինի շինարարության ընթացքում առաջացող թափոնները ոչ պատշաճ հավաքման և տեղափոխման հետ:

Ազդեցություն օդի որակի վրա (փոշի և արտանետվող գազեր)

- Շինարարության աշխատանքների ընթացքում հողային աշխատանքների ժամանակ կառաջանան փոշու արտանետումներ: Աշխատանքային տեղամասերի քանդված/փորված հատվածները նույնպես կդառնան փոշու աղբյուր՝ վատթարացնելով տվյալ տարածքի օդի որակը: Փոշու առաջացումը պետք է

մեղմացվի և շինարարական նյութերի ու տեխնիկայի տեղափոխման համար նախատեսված ճանապարհները ջրելու միջոցով:

- Շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների շահագործման ընթացքում առաջանում են վառելիքի այրման արգասիքներ և փոշի՝ այս ազդեցությունը կլինի աննշան, քանի որ մակարդակն ու տևողությունը սահմանափակ կլինեն: Այնուամենայնիվ, փոխադրամիջոցների վրա կկիրառվեն արտանետումները թուլացնող միջոցներ: Շինարարության ընթացքում առաջացող արտանետումների քանակների հաշվարկները, ինչպես նաև արտանետումների հետևանքով տնտեսական վնասի հաշվարկը ներկայացված են:

Աղմուկի և թոթոման հետ կապված ազդեցություններ

Շինարարության ընթացքում փոխադրամիջոցների և սարքերի (ներառյալ էքսկավատորներ, խտացուցիչներ, պնևմատիկ մուրձեր) շահագործման և շինարարությանն առնչվող այլ գործողությունների հետևանքով աղմուկ և թոթոմ է առաջանում: Ազդեցության նկատմամբ առավել զգայուն ընկալիչները փողոցների և տարածքների ծրագծի բնակելի շենքերի բնակիչներն են, ուստի մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը կիրականացվի աղմուկի և թոթոման գործիքային չափման աշխատանքներ, որի արդյունքները կընդունվեն, որպես ելակետային (Ֆոնային) հետագա աշխատանքների իրականացման համար:

Շինարարական աղմուկի մակարդակը շրջակայքի ազդակիրների վրա շինարարության ընթացքում փոխվում են՝ կախված իրականացվող գործողություններից, զգայուն ընկալիչների հեռավորությունից, ինչպես նաև մթնոլորտային պայմաններից: Կապալառուն կմշակի Շրջակա միջավայրի պահպանության պլան՝ երբ շինարարական ճամբարների տեղանքը հայտնի լինի: Աղմուկի նվազեցման մեղմացնող միջոցառումները, որոնք կկիրառվեն հետևյալն են՝

- շինարարական ճամբարները տեղադրել բնակելի թաղամասներից հեռու,
- աղմկաշատ գործողությունները հնարավորության դեպքում իրականացնել ընկալիչներից հեռու,
- աղմկաշատ գործողությունները կազմակերպել ցերեկվա ժամերին՝ խուսափելով գիշերային ժամերին աշխատանքներ կատարելուց,
- հնարավորինս նվազեցնել ծանր սարքավորումների տեղափոխումը քաղաքի ներսում մոտ տարածքներով՝ սահմանելով հատուկ ուղիներ, մուտքեր՝ դեպի շինհրապարակ և շրջանցիկ ճանապարհներ,
- սարքավորումների վրա տեղադրել աղմկակլանիչ սարքեր,

Աշխատանքների հետևանքով առաջացած հատուկ ազդեցություններ

- **Շինարարական ճամբարներ.** ցանկացած շինարարական ճամբարի համար տեղանքը կտրամադրվի Գյումրի քաղաքի քաղաքապետարանի կողմից՝ նվազագույն ազդեցություն թողնելու նպատակով: Յուրաքանչյուր ճամբարի համար Կապալառուն կմշակի Շինարարական աշխատանքների ճամբարների պլան՝ որպես տվյալ աշխատանքային տեղամասին հատուկ ԲԿՊ-ի մաս, որը կներառի ԲԿՊ-ում նշված միջոցառումները:
- **Հաղորդուղիներ.** շինարարության ընթացքում առկա է վերգետնյա և ստորգետնյա հաղորդակցուղիների խափանման պոտենցիալ ռիսկ: Դրանք կարող են լինել՝ վերգետնյա գազատարներ, ջրատարներ, կոյուղիներ, էլեկտրականության մալուխներ, ինչպես նաև ոռոգման ջրագծեր: Նախքան շինարարության մեկնարկը, Կապալառուն պետք է պատրաստի ժամանակավոր կամ մշտական տեղափոխման կամ/և պահպանման/սպասարկման պլան: Սպասարկումների ցանկացած խափանում պետք է լինի կարճաժամկետ և տեղայնացված և հաշվի կառնվեն տարվա ժամանակն ու օրվա ժամերը: Ազդեցության ենթակա անձինք պետք է ծանուցվեն դրա մասին նախքան աշխատանքներն սկսվելը: Այս խնդրի կառավարումը կիրականացվի ԲԿՊ-ում ներկայացված Հաղորդուղիների պահպանման և տեղափոխության պլանի համաձայն:
- **Անվտանգություն.** շինհրապարակի անվտանգությունը և աշխատողների ու վերանորոգվող փողոցների բնակիչների անվտանգությունը խիստ կարևոր նշանակություն ունի: Ազդեցություններն առնչվում են աշխատանքային հիգիենայի ռիսկերին, ինչպես օրինակ՝ պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածինները (ՊԱԱ), որոնք առաջանում են ասֆալտապատման աշխատանքների ժամանակ, ինչպես նաև անվտանգության ռիսկերին՝ կապված շինարարական աշխատանքների հետ: Կապալառուն պետք է բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկի շինարարության ընթացքում հանրության և հետիոտնի անվտանգությունն ապահովելու համար՝ համաձայն Աշխատանքների հիգիենայի և անվտանգության պլանի: Նախքան շինարարությունն սկսելը պետք է ապահովվեն առաջին բուժօգնության միջոցները և մշակվի արտակարգ իրավիճակների արձագանքման պլան:
- **Զբաղվածություն.** Ծրագրի շրջանակներում տեղացիների համար աշխատանքային տեղեր ստեղծելու հնարավորություններ կան: Առաջարկվում է հնարավորության դեպքում աշխատողներին առավելապես ընդգրկել տեղական բնակչությունից:
- **Բնապահպանական և անվտանգության կողմնորոշվածություն.** Բնապահպանական և անվտանգության կողմնորոշվածության ուսուցողական պլանը կմշակվի և

կիրականացվի Ծրագրի բոլոր փուլերում: Ուսուցողական ծրագիրը կներառի Կապալառուի բնապահպանության և անվտանգության մասնագետների կողմից Կապալառուի ողջ անձնակազմի համար բնապահպանական, առողջապահական և անվտանգության խնդիրների վերաբերյալ ուսուցողական դասընթացների կազմակերպում՝ համաձայն ԲԿՊ-ում ներկայացված Անվտանգության կողմնորոշման պլանի համապատասխան: Ինժեներական անձնակազմը և աշխատողները իրենց առաջին աշխատանքային շաբաթվա ընթացքում պարտավոր են մասնակցել կողմնորոշման/անվտանգության ներածական դասընթացին և աշխատանքի ընդունված նոր աշխատողների համար պարբերաբար կազմակերպվող դասընթացներին: Շինհրապարակի աշխատողներին պետք է իրազեկել և ուսուցանել ստանդարտ բնապահպանական, առողջապահական և անվտանգության պահանջները:

- **Ազդեցությունը հանրության վրա.** Կապալառուն հնարավոր ազդեցություն կրողներին կծանուցի նրանց տարածքում հետագա շինարարական աշխատանքների մասին, որոնց հետևանքով կշատանա փոշին, աղմուկը, թոթոմները ժամանակավորապես կփակվեն փողոցները ու կավելանան երթևեկության շեղումները: Այն կարող է ազդարարվել տեղական ՋԼՄ-ների միջոցով: Ծանուցումները պետք է ներառեն այն անձանց կոնտակտային տվյալները, որոնց պետք է դիմել լրացուցիչ տեղեկություններ ստանալու կամ բողոք ներկայացնելու համար: Արդյունավետությունն ապահովելու համար հանրային տեղեկատվական քարտզարշավները պետք է ընդլայնվեն՝ ներգրավելով ՀԿ-ներին:
- **Պինդ և հեղուկ թափոններ.** պինդ թափոնները, որոնք կարող են առաջանալ շինարարության ընթացքում, ներառում են ճանապարհային ծածկի ավելացած նյութերը, յուղի ֆիլտրեր, նյութերի փաթեթավորման պարագաները և աշխատողների կողմից նետած պինդ թափոնները: Ծրագրի ընթացքում առաջացող հեղուկ թափոններ են կեղտաջրերը/կոյուղաջրերը ու նավթայուղերի թափոնները: Բնապահպանական կառավարման պլանը նշում է, որ թափոնները պետք է հավաքվեն, պահեստավորվեն, տեղափոխվեն և կուտակվեն՝ ՀՀ օրենսդրության և ՇՄՆ պահանջներին համապատասխան:
- Ավելորդ հողին, յուղի և վառելանյութի արտահոսքին և այլ արտանետվող թափոններին առնչվող խնդիրները ներկայացված են ԲԿՊ-ում, և դրանց վերաբերյալ մեղմացնող միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից՝ Թափոնների և նյութերի կառավարման պլանի:
- **Փոխադրամիջոցների շարժը ծրագրում ընդգրկված փողոցներում և տարածքներում և փոփոխության ենթարկված մուտքերը.** Ծրագրի շինարարական աշխատանքների

ընթացքում թափոնները, շինարարական նյութերն ու սարքավորումները փոխադրելու պատճառով կմեծանա ծանր փոխադրամիջոցների շարժը քաղաքի կենտրոնական հատվածներում: Կիսաթարվի մուտքը դեպի որոշ փողոցներ և տարածքներ, ինչպես նաև կշատանան ճանապարհային երթևեկության կոնֆլիկտային իրավիճակները: Կապալառուն պարտավոր է սահմանել իր երթուղիները և դեպի շինարարական տեղամաս մուտքի կետերը: Նա նաև պատասխանատու կլինի իր նյութերի և ապրանքների աղբյուրների ընտրության համար (խճաքար, ասֆալտ և այլն):

- Շինանյութի փոխադրումը Ծրագրի շինարարական տեղամասերում: Տեղափոխության համար նախատեսված երթուղիները կախված կլինեն քարհանքերի և բացահանքերի տեղավայրերից, որոնք կապալառուն կօգտագործի: Այն կապալառուն, ում կշնորհվի պայմանագիրը, պետք է ձեռք բերի բոլոր անհրաժեշտ թույլտվությունները երթևեկության ուղղությունների առնչությամբ և պատրաստի Երթևեկության և մուտքերի կառավարման պլան՝ որպես թարմացված ԲԿՊ-ի մաս: Տեղափոխության համապատասխան սխեման պետք է ներառվի թարմացված ԲԿՊ-ում:
- Մոբիլիզացիայի ժամանակահատվածում կապալառուի կողմից պետք է մշակվի Երթևեկության և մուտքերի կառավարման պլան՝ որպես ԲԿՊ մաս, որտեղ կսահմանվեն անվտանգ մուտքի և ելքի կետերը, կնախատեսվեն անվտանգության խիստ միջոցառումներ՝ ներգրավելով տարածքային ոստիկանությանը, կսահմանվեն մատակարարումների ժամանակացույցները, ինչպես նաև տեղական իշխանությունների հետ համատեղ կսահմանվեն տեղական ճանապարհներով անցնող երթուղիները՝ երթևեկության կառավարման և հնարավոր կոնֆլիկտները նվազագույնի հասցնելու նպատակով:
- **Շինհրապարակի վերականգնում.** մինչև շինարարական աշխատանքների ավարտը և նախքան շինհրապարկը Գյումրու քաղաքապետարանին հանձնելը Կապալառուն պետք է վերականգնի շինհրապարակը, որը կներառի տարածքի մաքրում բոլոր շինարարական նյութերից և թափոններից և տեղափոխում քաղաքապետարանի կողմից հաստատված վայր
- **Սոցիալական խնդիրներ.** Շինարարության ընթացքում ծրագրում ներառված փողոցների մոտ գտնվող հատվածներում ազդեցություն կրողները կենթարկվեն շինարարության հետևանքով առաջացած կարճաժամկետ վնասակար ազդեցություններին՝ ներառյալ աղմուկը, փոշին և մուտքի հետ կապված սահմանափակումները, որոնք գոյացնում են հավաքական ազդեցություններ: Այս ազդեցությունները կմեղմացվեն՝ հասցվելով գրեթե աննշան մակարդակների:

Շինարարական աշխատանքները չեն ընթանա միաժամանակ, հետևաբար շինարարության ընթացքում չեն լինի բացասական համակցված ազդեցություններ

Աղյուսակ 18. Բնապահպանական կառավարման պլան

Ճանապարհի շինարարության գործողությունները	Շրջակա միջավայրի վրա և սոցիալական հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Իրականացման ժամանակացույցը	Պատասխանատու մարմինը կամ անձը	Ծախսերը, հազ.դրամ
Մանրամասն նախագիծ					
Ծրագրի մանրամասն նախագծի ճշտում	Հնագիտական, պատմական և մշակութային տարածքների վնասում	Համաձայնեցնել աշխատանքները ԿԳՄՄՆ-ի և Գյումրու քաղաքապետարանի հետ	Մինչև շինարարական աշխատանքների սկիզբը	"Հալդի քոնսալթինգ" ՍՊԸ	Վարկային պայմանագրի կապ.շին. շրջանակներում
Շինարարություն	Ֆիզիկական.				
Հողային աշխատանքներ	Անհանգստություններ աղմուկից, փոշուց, օդի աղտոտումից և երթևեկությունից	Ապահովել փոշու կրճատումը ջրցանման միջոցով	Շին. ամբողջ ընթացքում	Շինարարության կապալառու	Շին.ծախսեր
Թոփոնների կառավարում					Շին.ծախսեր
	Աղբի, ավելորդ նյութերի և շինարարական աղբի ոչ պատշաճ տեղադրում և կուտակում	Պինդ թափոնների և աղբի պարբերական հավաքում, կուտակում պատշաճ կերպով	Շին. ամբողջ ընթացքում	Շինարարության կապալառու	Շին.ծախսեր
Շինարարական տեխնիկայի աշխատանք					Շին.ծախսեր

Բեռնափոխադրումներ	Անհանգստություններ մեծ քանակի փոշուց և գազային արտանետումներից ճանապարհի երկայնքով իրականացվող շինարարական աշխատանքների և շինարարական նյութերի տեղափոխման արդյունքում,	Ապահովել փոշու կրճատումը ջրցանման միջոցով	Շին. ամբողջ ընթացքում	Շինարարությ ան կապալառու	Շին.ծախսեր
		Երթևեկության կազմակերպված կառավարում և հասարակության բարձր տեղեկացվածություն	Շին. ամբողջ ընթացքում	Շինարարությ ան կապալառու	Շին.ծախսեր

Շին տեխնիկայի կայանում և սպասարկում	Անձրևներից և հեղեղներից հետո օգտագործվող շինարարական տեխնիկայի քսայուղերի և դիզ. վառելիքի, հակակոռոզիոն ներկերի և այլ քիմիական միացությունների արտահոսք	Նավթամթերքի պահեստները տեղադրել բետոնաձածկ և եզրապաշտպան տարածքներում, ցանցեր և այլ պաշտպանիչ կառուցվածքներ նախատեսել շինարարական բոլոր այն տարածքներում՝ որտեղ հնարավոր է ջրի և խոնավության ներթափանցումը քսայուղերի, ներկերի և այլ քիմիական միացություններ պարունակող պահեստներ:	Շին. ամբողջ ընթացքում	Շինարարության կապալառու	Շին.ծախսեր
		Շինարարական և աշխատանքային հրապարակներում կազմակերպել պատշաճ մոնիթորինգ, վերահսկում և կառավարում:	Շին. ամբողջ ընթացքում	Շինարարության կապալառու	Շին.ծախսեր
	Անձրևներից և հեղեղներից հետո արտահոսքեր բաց (չպաշտպանված) հողից և փորված-հանված նյութերի կուտակումներից:	Կառուցել համապատասխան ժամանակավոր և մշտական ջրահեռացման համակարգ	Յուրաքանչյուր տեղամասում մինչև աշխատանքների սկիզբը	Շինարարության կապալառու	Շին.ծախսեր
Հողաձածկ					

	Այն տեղամասերում ուր առկա է բերրի հողաշերտ իրականացնել բուսաշերտի կտրում և տեղափոխում հատուկ կազմակերպված պահեստներ	Իրականացնել հանվող հողային զանգվածի խոնավացում	Աշխատանքների սկզբնական փուլում	Շինարարության կապալառու	Շին.ծախսեր
Բուսածածկի վնասում					
	Ծառերի և բուսականության կտրումներ/տեղափոխում:	Բուսական ծածկի, բուսականաշխարհի պաշտպանության պլան,	Շինարարության մեկնարկին	Շինարարության կապալառու	Շին.ծախսեր
				ենթակապալառու	Շին.ծախսեր
		Փողոցների ծրագծի երկայնքով ցանկապատման միջոցով սահմանափակել շինարարական աշխատանքները և աշխատակիցների գործունեությունը՝ բուսականության դեգրադացիայից և ոչնչացումից պաշտպանելու համար,	Շինարարական աշխատանքների սկզբին	Շինարարության կապալառու	Շին.ծախսեր
Հնագիտական/պատմական և մշակութային					
	"Կումայիրի" պատմամշակութային կենտրոն	Ֆիզիկական մշակութային ռեսուրսների պլան,	Մինչև աշխատանքների մեկնարկը	Շինարարության կապալառու	Շին.ծախսեր

		Ապահովել շինհրապարակների պատշաճ հեռավորություն պատմական արժեքներ կայացնող վայրերից		Շինարարության կապալառու	Շին.ծախսեր
		Աջակցել հնագիտական պեղումների իրականացմանը, եթե այդպիսիք ի հայտ գան	Աշխատանքների ընթացքում	ՀՀ ՄՆ	Շին.ծախսեր
	Ծրագծի երկայնքով հնագիտական, պատմական և մշակութային տարածքների սահմանների խախտում:	Հնագիտական գտածոների համար հետևել պատահական գտածոի գործընթացին,		Շինարարության կապալառու	Շին.ծախսեր
		Ապահովելով ուղիղ կապը ՄՆ համապատասխան մասնագետների հետ			Շին.ծախսեր
Սոցիալական.					-
	Հանրային լսումների և կապերի պլան	Հանրային լսումների իրականացում, համայնքներին տեղեկատվության տարմաղրում	Մինչև աշխատանքների մեկնարկը և աշխատանքների ընթացքում	ՀՏԶՀ, "Հալդի քոնսալթ"ՄՊԸ	Շին.ծախսեր

	ԲԿՊ-ի և Ծրագրի հետ կապված բնապահպանական օրենքների և կարգավորումների վերաբերյալ տեղեկատվության պակաս	Շինարարական անձնակազմի և աշխատակիցների համար կազմակերպել դասընթացներ՝ կապված բնապահպանական ու հնագիտական խնդիրների և ԲԿՊ-ի իրականացման հետ,	Մինչև աշխատանքների մեկնարկը և աշխատանքների ընթացքում	"Հալդի քոնսալթ"ՍՊԸ	Շին.ծախսեր
	Հասարակական տեղեկատվության պակաս տեղական համայնքների և այլ շահագրգիռ կողմերի համար	Տեղեկատվության տրամադրում ծրագրի տարբեր փուլերում	Աշխատանքների ընթացքում	Շինարարության կապալառու, "Հալդի քոնսալթ"ՍՊԸ	Շին.ծախսեր
	Սոցիալական կոնֆլիկտներ և անարդարություններ ոչ տեղացի աշխատակիցների հանդեպ և սահմանափակումներ կին աշխատակիցների նկատմամբ,	Շինարարական հրապարակների/ճամբարների սպասարկման համար անհրաժեշտ է կառուցել բավականաչափ սանհանգույցներ,	Մինչև աշխատանքների մեկնարկը և աշխատանքների ընթացքում	Շինարարության կապալառու	Շին.ծախսեր

		Հանրային առողջության հետ կապված բացասական ազդեցությունների կանխարգելման համար մեղմացնող միջոցառումներ. դրանք ներառում են տարածքի հիգիենիկ վիճակի բարելավում, պաշտպանիչ հագուստով ապահովում, աղբի և թափոնների համապատասխան հեռացման ապահովում,		Շինարարության կապալառու	Շին.ծախսեր
	Շրջակա միջավայրի, հնագիտական/պատմական հնավայրերի և մշակութային հուշարձանների վերաբերյալ աշխատակիցների ոչ բավարար տեղեկացվածություն ու դրանց նկատմամբ հոգատարության պակաս,	Շրջակա միջավայրի կառավարման վերաբերյալ կապալառուն պետք է իրականացնի աշխատակիցների ուսուցում՝ բացատրելով ազդեցությունների կանխարգելման/մեղմացման միջոցառումները, նրանց պայմանգրքերում ներառել ԲՎՊ-ն և իրականացնել բնապահպանական կառավարման մոնիթորինգ:		Շինարարության կապալառու	Շին.ծախսեր

	Աշխատակիցներին, ճանապարհից օգտվողներին և այլ անձանց շինարարական վնասվածքներից և մահից պաշտպանելու անվտանգության միջոցառումների բացակայություն,	Տեղադրել նշաններ և արգելապատնեշներ, ապահովելով մարդկանց և մեքենաների անվտանգ երթևեկությունը	Աշխատանքների ընթացքում	Շինարարության կապալառու	Շին.ծախսեր
Շահագործում և պահպանում.					
Կառուցվածքների և օբյեկտների ոչ պատշաճ վերահսկողություն և կառավարում	Անհարմարություններ փոշու, օդի աղտոտվածության և երթևեկության հետևանքով,	Ապահովել պատշաճ մաքրման վերահսկողությունը,	Աշխատանքների ամբողջ ընթացքում	Շինարարության կապալառու	Շին.ծախսեր
	Կառուցվածքների և օբյեկտների ոչ պատշաճ կառավարում,	Ապահովել հասարակական տեղեկատվություն երթևեկության վերաբերյալ,	Մինչև աշխատանքների մեկնարկը	ՀՏՀՏ, Շինարարության կապալառու	Շին.ծախսեր
	Շահագործման և պահպանման աշխատանքների ոչ պատշաճ վերահսկողություն:	Ապահովել հողի ծածկման իրականացումը արդյունավետ և խելամիտ կերպով:	Ըստ հողային կուտակումների	Շինարարության կապալառու	Շին.ծախսեր

Ընդամենը բնապահպանական միջոցառումների գումարը կկազմի՝ 7 մլն 673 հազար դրամ:

Աղյուսակ 19: Բնապահպանական մոնիտորինգ

Գործունեություն	Ինչ (պարամետր է վերահսկվելու)	Որտեղ (է պարամետրը վերահսկվելու)	Ինչպես (է պարամետրը վերահսկվելու)	Երբ (սահմանել հաճախականությունը/կ ամ շաբաթականությունը)	Ինչու (է պարամետրը վերահսկվելու)	Ով (է պատասխանատու պարամետրի վերահսկման համար)
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԼ						
1. Շինարարական նյութերի մատակարարում	Շինարարական նյութերի գնումը լիցենզավորված մատակարարներից	Մատակարարների գրասենյակներ և պահեստներ փոխառության վայրեր	Փաստաթղթերի ստուգում	Նյութերի մատակարարման վերաբերյալ համաձայնագրերի ստորագրման ընթացքում	Ապահովել շինարարության տեխնիկական որակը Պաշտպանել մարդկանց առողջությունը և միջավայրը	ՀՏԶ ՏՎԿ
2. Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում Շին տեխնիկայի և մեքենաների տեղաշարժը	Շինարարական տեխնիկայի և մեքենաների տեխնիկական վիճակը Բեռնատար մեքենաների թափքի ծածկի ապահովումը՝ շինարարական թափոններ և նյութեր տեղափոխելիս և 20 կմ/ժ չգերազանցող արագությամբ: Շինարարական տրանսպորտային միջոցների	Շին հրապարակի մուտքեր և ելքեր	Նախապես համաձայնեցված տեղափոխության երթուղիների ակնադիտական զննում Վերակառուցվող ճանապարհի տեղամասի զննում	Չնախատեսված ամսական մոնիտորինգային ստուգայցեր	Շրջակա միջավայրում արտանետումների կառավարում Աղմուկի և թոթորումների կառավարումը գործող նորմերին համապատասխան Հետիոտնային անցումների անվտանգության, երթևեկության և արտակարգ	ՀՏԶ ՏՎԿ

	և մեքենաների տեղափոխում սահմանված երթուղիներով և աշխատանքային ժամերին (9:00-18:00): Ջրցանման իրականացում՝ փոշի առաջացնող շինարարական աշխատանքների ընթացքում				պատահարների կառավարում	
3. Շինարարության համար աշխատուժի ներգրավում	Անձնակազմին համազգեստի և անվտանգության սաղավարտների ապահովում Աշխատանքի անվտանգության հրահանգավորում և գրանցում Աղմուկ և թոթոմ առաջացնող աշխատանքների իրականացում օրվա աշխատանքային ժամերին (9:00-18:00) և թույլատրելի նորմերի տիրույթում Երթևեկության կարգավորման և անվտանգության միջոցառումների իրականացում	Շին հրապարակ	Ճանապարհի վերակառուցվող հատվածի՝ ներառյալ վերակառուցվող ճանապարհի սկզբի և վերջի Տեսողական զննում և պարբերաբար գործիքային չափումներ	Շինարարության ամբողջ փուլում ամսական այցելությունների ընթացքում	Նվազեցնել պատահարների հավանականությունը Պաշտպանել աշխատողների առողջությունը և աշխատանքի անվտանգությունը Աղմուկի և թոթոմների կառավարումը գործող նորմերին համապատասխան բացառելու համար հնարավոր բոլորքները	ՀՏԶ ՏՎԿ
4. Շինարարական թափոնների առաջացում	Թափոնների ժամանակավոր կուտակում շին հրապարակի նախապես սահմանված վայրերում և պարբերաբար հեռացում թույլատրված աղբավայր	Շին հրապարակ և թափոնների հեռացման վայր	Շին հրապարակի դիտազննում՝ ներառյալ վերակառուցվող ճանապարհի սկիզբը և վերջը	Պարբերաբար շինարարության ընթացքում առանց նախապես զգուշացման այցելություններ/ստուգումներ	Շին հրապարակի և հարակից միջավայրի շին աղբի կուտակումների կանխարգելում	ՀՏԶ ՏՎԿ

5. Շինարարական սարքավորումների պահպանում	- Մեքենաների և շինարարական տեխնիկայի մաքրում շինարարական կայանից դուրս կամ բնական հոսանքներից առավելագույն հեռավորության վրա - շինարարական սարքավորումների լիցքավորումը կամ քանյութը՝ շինարարության վայրից դուրս կամ կանխորոշված սահմանափակված տարածքում	Շինհրապարակ	Գործողությունների վերահսկում	Աշխատանքային ժամերի ընթացքում ընտրողական այցեր	- Խուսափեք սարքավորումների շահագործման պատճառով նավթամթերքներ ի ջրի և հողի աղտոտումից: - Հրդեհի դեպքում ժամանակին տեղայնացնել և նվազեցնել ակնկալվող վնասը	ՀՏԶ ՏՎԿ
6. Կենցաղային աղբի առաջացում	Աղբարկղերի ապահովում, թափոնների տեղադրումը տեղում: Թափոնների կանոնավոր տեղափոխության շուրջ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնություն	Շինարարական հրապարակ	Դիտագնում	Շինարարության ամբողջ ժամանակահատվածում	Խուսափել կենցաղային աղբի պատճառով հողի եւ ջրի աղտոտվածությունից,	ՀՏԶ
7. Հողային աշխատանքներ	- ավելցուկային զանգվածը գրավոր հաստատված վայրեր տեղափոխություն:	Շինհրապարակ	Գործողությունների զննում	Հողային աշխատանքների ընթացքում	Առաջացած ոչ պիտանի հողային զանգվածների ոչ ճիշտ տեղադրում, պահեստավորում և տեղափոխում համապատասխան հատկացված վայրեր	ՀՏԶ ՏՎԿ
8. Պատահական գտածոներ	- Աշխատանքների դադարեցում՝ անմիջապես	Շինհրապարակ	- Պատահական գտածոների զննում.	Շինարարության ամբողջ ընթացքում	Համոզվել, որ մշակութային	ՀՏԶ ՏՎԿ

	փոփոխության գտածոների բախումից հետո. - Պաշտոնական հաղորդակցություն ՀՀ հուշարձանների և պատմական վայրերի պաշտպանության գործակալության հետ՝ պատահական գտածոների հետ. - Անհրաժեշտ պեղումների և տեղանքների պահպանման ուղղությամբ ձեռնարկված ժամանակին պայմանավորվածություններ		- Ներկայացված փաստաթղթերի ստուգում		հուշարձանը չի վնասվել շինարարական աշխատանքների ընթացքում	Հուշարձանների և պատմական վայրերի պաշտպանության գործակալություն
